

Խորհրդի 2003 թվականի նոյեմբերի 27-ի թիվ 2201/2003 (ԵՀ) կանոնակարգ

Ամուսնական և ծնողական իրավունքների վերաբերյալ գործերով իրավասության և վճիռների ճանաչման ու կատարման մասին, որով ուժը կորցրած է ճանաչվում թիվ 1347/2000 կանոնակարգը

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ,

հաշվի առնելով Եվրոպական համայնքի հիմնադրման մասին համաձայնագիրը, մասնավորապես, դրա հոդվածներ 61«գ»-ն և 67«1»-ը,

հաշվի առնելով Հանձնաժողովի ստացված առաջարկը¹,

հաշվի առնելով Եվրոպական պառլամենտի եզրակացությունը²,

հաշվի առնելով Տնտեսական և սոցիալական հարցերով Եվրոպական կոմիտեի եզրակացությունը³,

Քանի որ.

1) Եվրոպական համայնքը նպատակ է հետապնդում ձևավորել ազատության, ապահովության և արդարադատության տարածք, որտեղ երաշխավորված է անձանց ազատ տեղաշարժը: Այդ կապակցությամբ համայնքը պետք է, մասնավորապես, քաղաքացիական գործերով դատական համագործակցության ոլորտում ընդունի ակտեր, որոնք անհրաժեշտ են, որպեսզի ներքին շուկան պատշաճ գործի,

2) Տամպերեում Եվրոպական խորհուրդը հաստատեց դատական որոշումների փոխադարձ ճանաչման սկզբունքը՝ որպես իրական արդարադատության տարածքի ստեղծման անկյունաքար, և, որպես գերակայություն, նշեց տեսակցելու իրավունքները,

3) Խորհրդի թիվ 1347/2000 (ԵՀ) կանոնակարգով⁴ նախատեսվում են ամուսնական գործերի և ամուսիններից ծնված երեխաների նկատմամբ ծնողական իրավունքների վերաբերյալ գործերով իրավասության և նմանատիպ գործերով վարույթի շրջանակներում կայացված վճիռների ճանաչման և կատարման կանոնները: Սույն

¹ ՊՏ C 203 E, 27.08.2002 թ., էջ 155:

² 2002 թ. սեպտեմբերի 20-ի եզրակացություն (դեռ չի հրապարակվել պաշտոնական տեղեկագրում):

³ ՊՏ C 61, 14.03.2003 թ., էջ 76:

⁴ ՊՏ L 160, 30.06.2000 թ., էջ 19:

Կանոնակարգի բովանդակությունը հիմնականում կրկնում է նույն խնդրո առարկայի¹ վերաբերյալ 1998 թվականի մայիսի 28-ի կոնվենցիայի դրույթները,

4) 2000 թվականի հուլիսի 3-ին Ֆրանսիան հանդես եկավ երեխաների հետ տեսակցելու իրավունքների մասին վճիռների փոխադարձ ճանաչման մասին Խորհրդի կանոնակարգ ընդունելու նախաձեռնությամբ²,

5) բոլոր երեխաների համար հավասարությունն ապահովելու նպատակով սույն Կանոնակարգը վերաբերում է ծնողական իրավունքների մասին բոլոր որոշումներին, ներառյալ, երեխայի պաշտպանության միջոցներին՝ անկախ ամուսնական գործերով վարույթի հետ կապի առկայությունից,

6) քանի որ ծնողական իրավունքների մասին նորմերի կիրառման խնդիրը հաճախ ծագում է ամուսնալուծության վարույթների համատեքստում, ավելի նպատակահարմար է ամուսնալուծության և ծնողական իրավունքների վերաբերյալ գործերի համար ունենալ միասնական փաստաթուղթ,

7) սույն Կանոնակարգի գործողությունը տարածվում է քաղաքացիական գործերի վրա՝ անկախ դրանք քննող դատարանի կամ տրիբունալի բնույթից,

8) ինչ վերաբերում է ամուսնալուծության, առանձին ապրելու (legal separation) կամ ամուսնությունն անվավեր ճանաչելու մասին վճիռներին, սույն Կանոնակարգը կիրառվում է միայն ամուսնական կապերի խզման նկատմամբ և չի կարգավորում ամուսնալուծության հիմքերի, ամուսնության գույքային հետևանքների կամ ցանկացած այլ կողմնակի խնդիրների հետ կապված հարաբերությունները,

9) ինչ վերաբերում է երեխայի գույքին, ապա սույն Կանոնակարգը կիրառվում է միայն երեխայի պաշտպանության միջոցների նկատմամբ, այն է՝ i) երեխայի սեփականության համար պատասխանատու, երեխայի ներկայացուցիչը համարվող կամ երեխային աջակցող անձի կամ մարմնի նշանակումը և գործառույթները, և ii) երեխայի գույքի կառավարումը, պահպանումը կամ օտարումը: Այս համատեքստում սույն Կանոնակարգը կիրառվում է, օրինակ, այն դեպքերի նկատմամբ, որոնցում ծնողների միջև առկա է վեճ երեխայի գույքի կառավարման վերաբերյալ: Երեխայի գույքի հետ կապված միջոցների նկատմամբ, որոնք չեն վերաբերում երեխայի պաշտպանությանը, շարունակում է կիրառվել «Քաղաքացիական և առևտրային գործերով իրավասության և վճիռների ճանաչման ու կատարման մասին» Խորհրդի 2000 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 44/2001 (ԵՀ) կանոնակարգը³,

10) սույն Կանոնակարգը չի կիրառվում սոցիալական ապահովության հետ կապված խնդիրների, կրթության կամ առողջապահության հարցերի կապակցությամբ

¹ Թիվ 1347/2000 (ԵՀ) կանոնակարգն ընդունելիս Խորհուրդը հաշվի է առել այդ Կոնվենցիայի մասին պրոֆեսոր Ալեգրիա Բոռասի պատրաստած բացատրական զեկույցը (ՊՏ C 221, 16.07.1998 թ., էջ 27):

² ՊՏ C 234, 15.08.2000 թ., էջ 7:

³ ՊՏ L 12, 16.01.2001 թ., էջ 1: Կանոնակարգը՝ վերջին անգամ Հանձնաժողովի No 1496/2002 (ԵՀ) կանոնակարգի (ՊՏ L 225, 22. 08.2002 թ., էջ 13) համաձայն դրանում կատարված փոփոխություններով:

իրականացվող ընդհանուր բնույթի պետական միջոցառումների կամ ապաստանի կամ ներգաղթի իրավունքի մասին որոշումների նկատմամբ: Սույն Կանոնակարգը չի կիրառվում նաև երեխայի սերման փաստի հաստատման նկատմամբ, քանի որ այդ խնդիրը տարբերվում է ծնողական իրավունքների վերապահումից: Սույն Կանոնակարգը չի կիրառվում նաև անձի կարգավիճակի հետ կապված այլ հարցերի նկատմամբ: Բացի այդ, սույն Կանոնակարգը չի տարածվում երեխաների կողմից կատարված հանցագործությունների պատճառով ձեռնարկված միջոցների վրա,

11) այլմենտային պարտավորությունները չեն գտնվում սույն Կանոնակարգի գործողության ոլորտում, քանի որ դրանք արդեն կարգավորվում են Խորհրդի թիվ 44/2001 կանոնակարգով: Սույն Կանոնակարգի համաձայն իրավասությամբ օժտված դատարանները, որպես կանոն, իրավասու են լուծելու այլմենտային պարտավորությունների մասին գործեր՝ կիրառելով Խորհրդի թիվ 44/2001 կանոնակարգի հոդված 5«2»-ը,

12) ծնողական իրավունքների հետ կապված խնդիրների նկատմամբ սույն Կանոնակարգով նախատեսված իրավասության հիմքերը սահմանվել են՝ առաջնորդվելով երեխայի շահերով, մասնավորապես, մերձավորության չափանիշով: Դա նշանակում է, որ իրավասությամբ առաջին հերթին պետք է օժտել երեխայի բնակության վայրի անդամ պետությանը՝ բացառությամբ երեխայի բնակության վայրի փոփոխության կամ ծնողական իրավունքներ ունեցող անձանց միջև համաձայնությամբ նախատեսված դեպքերի,

13) առաջնորդվելով երեխայի շահերով՝ սույն Կանոնակարգով, որպես բացառություն, որոշակի պայմանների բավարարման դեպքում, թույլատրվում է իրավասություն ունեցող դատարանին գործը հանձնել մեկ այլ անդամ պետության դատարան, եթե վերջինս գործը քննելու ավելի լավ հնարավորություն ունի: Այդ դեպքում երկրորդ դատարանին չի թույլատրվում գործը հանձնել որևէ երրորդ դատարան,

14) սույն Կանոնակարգի գործողությունը չի հանգեցնում դիվանագիտական անձեռնմխելիության վերաբերյալ միջազգային հանրային իրավունքի նորմերի կիրառության սահմանափակման: Այն դեպքում, երբ միջազգային իրավունքի համաձայն, դիվանագիտական անձեռնմխելիության առկայության հետևանքով սույն Կանոնակարգի համաձայն իրավասություն չի կարող իրականացվել, այն պետք է իրականացվի այն անդամ պետության ներպետական իրավունքի համաձայն, որտեղ տվյալ անձը չի օգտվում նման անձեռնմխելիությունից,

15) «Անդամ պետություններում քաղաքացիական և առևտրային գործերով դատական և արտադատական փաստաթղթերի հանձնման մասին»¹ Խորհրդի 2000 թվականի մայիսի 29-ի թիվ 1348/2000 (ԵՀ) կանոնակարգը կիրառվում է սույն Կանոնակարգի համաձայն հարուցված վարույթների շրջանակում՝ փաստաթղթերի հանձնման նկատմամբ,

16) սույն Կանոնակարգը չի կարող արգելել հրատապ դեպքերում անդամ պետության դատարանների կողմից հայցի ապահովման միջոցների ձեռնարկումը տվյալ պետությունում գտնվող անձանց կամ գույքի նկատմամբ,

¹ ՊՏ L 160, 30.06.2000 թ., էջ 37:

17) երեխային ապօրինաբար տեղափոխելու կամ պահելու դեպքում, երեխայի վերադարձը պետք է ապահովվի անհապաղ. այդ կապակցությամբ շարունակում է գործել 1980 թվականի հոկտեմբերի 25-ի Հաագայի կոնվենցիան՝ սույն Կանոնակարգի դրույթների, մասնավորապես՝ 11-րդ հոդվածի հետ մեկտեղ: Այն անդամ պետության դատարանները, ուր կամ որտեղից ապօրինաբար տեղափոխվել կամ պահվել է երեխան, պետք է կարողանան հավուր պատշաճի հիմնավորված որոշակի դեպքերում առարկել նրա վերադարձի դեմ: Այնուամենայնիվ, նման որոշումը կարող է հետագայում փոխարինվել այն անդամ պետության դատարանի որոշմամբ, որը, մինչև երեխային ապօրինի պահելը կամ տեղափոխելը, նրա բնակության վայրն է համարվել: Եթե վերջինս նախատեսում է երեխայի վերադարձը, ապա վերադարձը պետք է տեղի ունենա՝ առանց երեխայի տեղափոխման կամ պահման վայրի անդամ պետությունում այդ վճռի ճանաչման և կատարման համար պահանջվող հատուկ ընթացակարգի,

18) երբ դատարանը 1980 թվականի Հաագայի կոնվենցիայի 13-րդ հոդվածի հիման վրա որոշել է չվերադարձնել երեխային, այն պետք է այդ մասին տեղեկացնի նախքան երեխային ապօրինաբար տեղափոխելը կամ պահելը նրա բնակության վայրը հանդիսացող անդամ պետության իրավասու դատարանին կամ կենտրոնական մարմնին: Այդ դատարանը կամ կենտրոնական մարմինը պետք է ծանուցի կողմերին, եթե նշված անդամ պետությունում դատարանը գործը վարույթ չի ընդունել: Այս պարտավորությունը չպետք է խոչընդոտի կենտրոնական մարմնին ներպետական իրավունքի համաձայն ծանուցել նաև համապատասխան պետական մարմիններին,

19) երեխայի կարծիքը լսելը կարևոր է սույն Կանոնակարգի կիրառման համար, թեև, սույն փաստաթղթով չի նախատեսվում գործող ներպետական ընթացակարգերի փոփոխություն,

20) մեկ այլ անդամ պետությունում երեխային՝ իր կարծիքն արտահայտելու հնարավորության ընձեռումը կարող է տեղի ունենալ «Քաղաքացիական կամ առևտրային գործերով ապացույցներ ստանալու շուրջ անդամ պետությունների դատարանների միջև համագործակցության մասին»¹ Խորհրդի 2001 թվականի մայիսի 28-ի թիվ 1206/2001 (ԵՀ) կանոնակարգով նախատեսված կարգով,

21) որևէ անդամ պետությունում կայացված վճիռների ճանաչումը և կատարումը պետք է հիմնված լինի փոխադարձ վստահության սկզբունքի վրա, և ճանաչման համար սահմանված հիմքերը չպետք է գերազանցեն պահանջվող նվազագույնը,

22) Կողմերի միջև նույնական փաստաթղթերը և համաձայնագրերը, որոնք ենթակա են կատարման որևէ անդամ պետությունում, ճանաչման և կատարման մասին նորմերի կիրառման նպատակով պետք է համարվեն «վճռին» համարժեք փաստաթուղթ,

23) Տամպերեում Եվրոպական խորհուրդն իր եզրակացությունների մեջ (34-րդ կետ) նշել է, որ ընտանեկան վեճերի մասին վճիռները պետք է «ինքնաբերաբար ճանաչվեն Միության ողջ տարածքում՝ առանց որևէ միջանկյալ վարույթի և կատարումը մերժելու հիմքերի»: Ուստի, տեսակցելու իրավունքների և վերադարձի վերաբերյալ վճիռները, որոնք սույն Կանոնակարգի դրույթներին համապատասխան, հաստատվել

¹ ՊՏ L 174, 27.06.2001 թ., էջ 1:

են ծագման անդամ պետությունում, պետք է ճանաչվեն և ենթակա լինեն կատարման բոլոր մյուս անդամ պետություններում՝ առանց լրացուցիչ ընթացակարգի դիմելու անհրաժեշտության: Նման վճիռների կատարման մեխանիզմները շարունակում են կարգավորվել ներպետական իրավունքով,

24) վճռի կատարմանը նպաստելու համար տրված տեղեկանքը ենթակա չէ բողոքարկման: Այն պետք է ուղղվի միայն այն դեպքում, երբ առկա է էական սխալ, այսինքն, երբ այն ճշգրիտ կերպով չի արտացոլում վճիռը,

25) Կենտրոնական մարմինները պետք է համագործակցեն և՛ ընդհանուր հարցերում, և՛ կոնկրետ գործերի շրջանակում, այդ թվում՝ ծնողական իրավունքների մասին ընտանեկան վեճերի խաղաղ լուծմանը նպաստելու ուղղությամբ: Այս առումով, կենտրոնական մարմինները մասնակցում են Քաղաքացիական և առևտրային գործերով եվրոպական դատական ցանցին¹, որը ստեղծվել է «Քաղաքացիական և առևտրային գործերով եվրոպական դատական ցանցի ստեղծման մասին» Խորհրդի 2001 թվականի մայիսի 28-ի 2001/470/ԵՀ որոշմամբ (10),

26) Հանձնաժողովը պետք է հանրությանը հասանելի դարձնի և թարմացնի անդամ պետությունների կողմից իրեն ներկայացված դատարանների ցուցակները և դատական սխալների ուղղման ընթացակարգերը,

27) սույն Կանոնակարգի կիրարկման համար անհրաժեշտ ակտերը պետք է ընդունվեն Խորհրդի 1999 թվականի հունիսի 28-ի 1999/468/ԵՀ որոշմանը համապատասխան, որը սահմանում է Հանձնաժողովին² վերապահված կիրարկող լիազորությունների իրականացման ընթացակարգը,

28) սույն Կանոնակարգը փոխարինում է 1347/2000 (ԵՀ) կանոնակարգին, որը, սույն Կանոնակարգի ընդունմամբ, ուժը կորցրած է ճանաչվում,

29) սույն Կանոնակարգի պատշաճ կիրարկումն ապահովելու համար Հանձնաժողովը պետք է հետևի դրա կիրառությանը և առաջարկի անհրաժեշտ համարվող փոփոխություններ,

30) Միացյալ Թագավորությունը և Իռլանդիան, Եվրոպական միության մասին համաձայնագրին և Եվրոպական համայնքի հիմնադրման մասին համաձայնագրին կից՝ Միացյալ Թագավորության և Իռլանդիայի դիրքորոշման մասին արձանագրության 3-րդ հոդվածի հիման վրա, ծանուցել են սույն Կանոնակարգի ընդունմանը և կիրառությանը մասնակցելու իրենց ցանկության մասին,

31) Դանիան, Եվրոպական միության մասին համաձայնագրին և Եվրոպական համայնքի հիմնադրման մասին համաձայնագրին կից՝ «Դանիայի դիրքորոշման մասին» արձանագրության 1-ին և 2-րդ հոդվածների հիման վրա, չի մասնակցում սույն Կանոնակարգի ընդունմանը, ուստի, սույն Կանոնակարգով պարտավորություններ չի ստանձնել, և այն չի կիրառվում նրա նկատմամբ,

32) քանի որ սույն Կանոնակարգի նպատակները չեն կարող բավարար չափով իրագործվել անդամ պետությունների կողմից, այլ կարող են ավելի արդյունավետորեն

¹ ՊՏ L 174, 27.06.2001 թ., էջ 25:

² ՊՏ L 184, 17.07.1999 թ., էջ 23:

իրագործվել Համայնքի կողմից, Համայնքն իրավասու է միջոցներ ձեռնարկել՝ Համաձայնագրի 5-րդ հոդվածով նախատեսված լրացուցչության (subsidiarity) սկզբունքի համաձայն: Ելնելով համաչափության սկզբունքից՝ նախատեսված 5-րդ հոդվածով, սույն Կանոնակարգը նախատեսում է միայն այն նվազագույնը, որն անհրաժեշտ է նշված նպատակներին հասնելու համար և ոչ ավելին,

33) սույն Կանոնակարգով ճանաչվում են Հիմնարար իրավունքների մասին Եվրոպական միության խարտիայով սահմանված հիմնարար իրավունքները և պահպանվում դրանով նախատեսված սկզբունքները: Մասնավորապես, սույն Կանոնակարգի նպատակն է ապահովել Հիմնարար իրավունքների մասին Եվրոպական միության խարտիայի 24-րդ հոդվածով նախատեսված՝ երեխայի հիմնարար իրավունքների պահպանումը,

ԸՆԴՈՒՆԵՑ ՍՈՒՅՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ.

ԳԼՈՒԽ I

ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԸ ԵՎ ՄԱՀՄԱՆՈՒՄՆԵՐԸ

Հոդված 1

Գործողության ոլորտը

1. Սույն Կանոնակարգը, անկախ դատարանի կամ տրիբունալի բնույթից, կիրառվում է այն քաղաքացիական գործերի նկատմամբ, որոնք վերաբերում են՝

ա) ամուսնալուծությանը, առանձին ապրելուն կամ ամուսնության անվավեր ճանաչմանը.

բ) ծնողական իրավունքների վերապահմանը, իրականացմանը, պատվիրակմանը, սահմանափակմանը կամ դադարեցմանը:

2. Սույն հոդվածի պարբերություն 1 «բ»-ում նշված խնդիրները կարող են, մասնավորապես, առնչվել՝

ա) երեխայի նկատմամբ խնամքի և տեսակցելու իրավունքներին.

բ) խնամակալությանը, պատրոնաժին (curatorship) և նմանատիպ այլ ինստիտուտներին.

գ) երեխայի անձի կամ գույքի համար պատասխանատու, երեխային ներկայացնող կամ աջակցող անձի կամ մարմնի նշանակմանը և գործառույթներին.

դ) խնամատար ընտանիքում կամ համապատասխան հաստատության խնամքի ներքո երեխայի տեղավորմանը.

ե) երեխայի գույքի կառավարման, պահպանության կամ օտարման կապակցությամբ՝ երեխայի պաշտպանության միջոցառումներին:

3. Սույն Կանոնակարգը չի կիրառվում՝

- ա) երեխա-ծնող հարաբերությունների հաստատման կամ վիճարկման նկատմամբ.
- բ) որդեգրման մասին որոշումների, որդեգրումը նախապատրաստելու նպատակով իրականացվող միջոցառումների, որդեգրումն անվավեր ճանաչելու կամ վերացնելու մասին որոշումների նկատմամբ.
- գ) երեխայի անվան և ազգանունների նկատմամբ.
- դ) անչափահասին լրիվ գործունակ ճանաչելու (Էմանսիպացիա) նկատմամբ.
- ե) այլմենտային պարտավորությունների նկատմամբ.
- զ) հավատարմագրային կառավարման կամ իրավահաջորդության նկատմամբ.
- է) երեխաների կատարած հանցագործությունների պատճառով ձեռնարկված միջոցների նկատմամբ:

Հոդված 2

Սահմանումներ

Սույն Կանոնակարգի նպատակներից ելնելով՝

1. «դատարան» եզրույթը վերաբերում է անդամ պետությունների բոլոր մարմիններին, որոնք իրավասություն ունեն 1-ին հոդվածի համաձայն սույն Կանոնակարգի գործողության ոլորտում գտնվող հարցերի նկատմամբ.
2. «դատավոր» եզրույթը նշանակում է դատավոր կամ այլ պաշտոնատար անձ, ով դատավորի լիազորություններին հավասար լիազորություններ ունի սույն Կանոնակարգի գործողության ոլորտում գտնվող հարցերի նկատմամբ.
3. «անդամ պետություն» եզրույթը նշանակում է Եվրոպական միության բոլոր անդամ պետությունները՝ բացառությամբ Դանիայի.
4. «վճիռ» եզրույթը նշանակում է ամուսնալուծության, առանձին ապրելու կամ ամուսնությունն անվավեր ճանաչելու, ինչպես նաև ծնողական իրավունքների վերաբերյալ վճիռ, որը կայացրել է որևէ անդամ պետության դատարան՝ անկախ այդ վճռի անվանումից, ներառյալ՝ հրամանները, կարգադրությունները և որոշումները.
5. «ծագման անդամ պետություն» եզրույթը նշանակում է այն անդամ պետությունը, որտեղ կայացվել է կատարման ենթակա վճիռը.
6. «կատարման անդամ պետություն» եզրույթը նշանակում է այն անդամ պետությունը, որտեղ վճռի կատարման պահանջ է ներկայացվել.
7. «ծնողական իրավունքներ» եզրույթը նշանակում է երեխայի անձի կամ սեփականության հետ կապված բոլոր իրավունքները և պարտականությունները, որոնք ֆիզիկական կամ իրավաբանական անձը ձեռք է բերում կամ ստանձնում է

վճռի համաձայն՝ օրենքի ուժով կամ իրավաբանական ուժ ունեցող համաձայնության հիման վրա: Այս հասկացությունը ներառում է երեխայի նկատմամբ խնամքի և նրա հետ տեսակցելու իրավունքները.

8. «ծնողական իրավունքներ ունեցող» եզրույթը նշանակում է ցանկացած անձ, ով ծնողական իրավունքներ ունի երեխայի նկատմամբ.

9. «երեխայի նկատմամբ խնամքի իրավունք» եզրույթը ներառում է երեխայի անձի խնամքի հետ կապված իրավունքներն ու պարտականությունները, մասնավորապես, երեխայի բնակության վայրը որոշելու իրավունքը.

10. «տեսակցելու իրավունքներ» եզրույթը ներառում է, մասնավորապես, սահմանափակ ժամանակով երեխային իր բնակության վայրից մեկ այլ վայր տանելու իրավունքը.

11. «ապօրինի տեղափոխում կամ պահում» հասկացությունը նշանակում է երեխայի տեղափոխումը կամ պահումն այն դեպքում, երբ՝

ա) դա խախտում է երեխայի նկատմամբ խնամքի իրավունքները, որոնք ձեռք են բերվել վճռի համաձայն կամ օրենքի ուժով կամ այն անդամ պետության իրավունքով իրավաբանական ուժ ունեցող համաձայնության հիման վրա, որտեղ երեխայի բնակության վայրն է՝ տեղափոխվելուց կամ պահվելուց անմիջապես առաջ,

և

բ) պայմանով, որ հեռացման կամ պահման պահին խնամքի իրավունքները փաստացի իրականացվել են կամ համատեղ, կամ առանձին, կամ այդ կերպ կիրականացվեին, եթե չլիներ հեռացումը կամ պահումը: Խնամքը համարվում է համատեղ, երբ, վճռի համաձայն կամ օրենքի ուժով, ծնողական իրավունքներ ունեցողներից մեկը չի կարող որոշել երեխայի բնակության վայրը՝ առանց ծնողական իրավունքներ ունեցող մյուս անձի համաձայնության:

ԳԼՈՒԽ II

ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆԸ

ԲԱԺԻՆ 1

Ամուսնալուծությունը, առանձին ապրելը և ամուսնությունն անվավեր ճանաչելը

Հոդված 3

Ընդհանուր իրավասությունը

1. Ամուսնալուծության, առանձին ապրելու կամ ամուսնությունն անվավեր ճանաչելու վերաբերյալ գործերի նկատմամբ իրավասություն ունեն այն անդամ պետության դատարանները,

ա) որի տարածքում՝

- ամուսինների բնակության վայրն է կամ
- ամուսինների վերջին բնակության վայրն է, եթե նրանցից մեկը դեռ բնակվում է այնտեղ, կամ
- պատասխանողի բնակության վայրն է, կամ
- համատեղ հայցի դեպքում՝ ամուսիններից մեկի բնակության վայրն է, կամ
- հայցվորի բնակության վայրն է, եթե վերջինս բնակվել է այնտեղ՝ հայցը հարուցելու պահին անմիջապես նախորդող առնվազն մեկ տարվա ընթացքում, կամ
- հայցվորի բնակության վայրն է, եթե վերջինս բնակվել է այնտեղ հայցը հարուցելու պահին նախորդող առնվազն վեց ամսվա ընթացքում և տվյալ անդամ պետության քաղաքացի է կամ, Միացյալ Թագավորության և Իռլանդիայի դեպքում, այնտեղ «դոմիցիլիա» ունի.

բ) որի քաղաքացիություն ունեն ամուսինները կամ, Միացյալ Թագավորության և Իռլանդիայի դեպքում, որի «դոմիցիլիա» ունեն ամուսինները:

2. Սույն Կանոնակարգի իմաստով «դոմիցիլիա»-ն ունի նույն իմաստը, ինչ Միացյալ Թագավորության և Իռլանդիայի իրավական համակարգերում:

Հոդված 4

Հակընդդեմ հայցը

Այն դատարանը, որտեղ 3-րդ հոդվածի հիման վրա քննվում է գործը, իրավասություն ունի նաև քննելու հակընդդեմ հայցը, եթե վերջինս գտնվում է սույն Կանոնակարգի գործողության ոլորտում:

Հոդված 5

Առանձին ապրելու մասին վճռի վերաձուլումը ամուսնալուծության

Չսահմանափակելով 3-րդ հոդվածի գործողությունը՝ անդամ պետության՝ առանձին ապրելու մասին վճիռ կայացրած դատարանն իրավասություն ունի նաև այդ վճիռը ամուսնալուծության վճռի վերածելու, եթե այդ իրավասությունը նախատեսված է տվյալ անդամ պետության իրավունքով:

Հոդված 6

3-րդ, 4-րդ և 5-րդ հոդվածներով նախատեսված իրավասության բացառիկ բնույթը

Այն ամուսնու դեմ, որի՝

ա) բնակության վայրն անդամ պետության տարածքում է կամ

բ) որևէ անդամ պետության քաղաքացիություն ունի, իսկ Միացյալ Թագավորության և Իռլանդիայի դեպքում, դրանցից որևէ մեկում «դոմիցիլիա» ունի,

կարող է հայց հարուցվել մեկ այլ անդամ պետությունում՝ միայն 3-րդ, 4-րդ և 5-րդ հոդվածների համաձայն:

Հոդված 7

«Մնացորդային» իրավասությունը

1. Եթե անդամ պետության ոչ մի դատարան 3-րդ, 4-րդ և 5-րդ հոդվածների համաձայն իրավասություն չունի, յուրաքանչյուր անդամ պետությունում իրավասությունը որոշվում է այդ պետության իրավունքի համաձայն:

2. Որևէ անդամ պետությունում բնակության վայր չունեցող, որևէ անդամ պետության քաղաքացի չհանդիսացող, իսկ Միացյալ Թագավորության և Իռլանդիայի դեպքում, այդ անդամ պետություններից որևէ մեկի տարածքում «դոմիցիլիա» չունեցող պատասխանողի դեմ հայց հարուցելիս անդամ պետության քաղաքացիները, որոնց բնակության վայրը մեկ այլ անդամ պետության տարածքում է, իրավասու են այդ պետության քաղաքացիների նման օգտվել այդ պետությունում գործող իրավասության մասին նորմերից:

ԲԱԺԻՆ 2

Ծնողական իրավունքները

Հոդված 8

Ընդհանուր իրավասությունը

1. Անդամ պետության դատարաններն իրավասություն ունեն երեխայի նկատմամբ ծնողական իրավունքների վերաբերյալ գործով, եթե դատարանի կողմից գործը վարույթ ընդունելու պահին երեխայի բնակության վայրը տվյալ անդամ պետությունում է:

2. Սույն հոդվածի 1-ին պարբերության նկատմամբ գործում են 9-րդ, 10-րդ և 12-րդ հոդվածների դրույթները:

Հոդված 9

Երեխայի նախկին բնակության վայրի իրավասության պահպանումը

1. Այն դեպքում, երբ երեխան օրինական կարգով տեղափոխվում է մեկ անդամ պետությունից մյուսը և բնակության նոր վայր է ձեռք բերում այնտեղ, երեխայի նախկին բնակության վայրի անդամ պետության դատարանները, 8-րդ հոդվածից բացառության կարգով, տեղափոխմանը հաջորդող եռամսյա ժամկետում պահպանում են իրավասությունը երեխայի տեղափոխվելուց առաջ տվյալ անդամ պետությունում տեսակցելու իրավունքների մասին կայացված վճիռը փոփոխելու նկատմամբ, եթե տեսակցելու իրավունքների մասին վճռի համաձայն տեսակցելու իրավունքներ ունեցողի բնակության վայրը շարունակում է լինել երեխայի նախկին բնակության վայրի անդամ պետությունում:
2. Սույն հոդվածի 1-ին պարբերությունը չի գործի, եթե դրանում նշված՝ տեսակցելու իրավունքներ ունեցող անձն ընդունել է երեխայի նոր բնակության վայրի անդամ պետության դատարանների իրավասությունը՝ մասնակցելով այդ դատարաններում ընթացող վարույթներին՝ առանց վիճարկելու դրանց իրավասությունը:

Հոդված 10

Իրավասությունը երեխայի առևանգման գործերով

Երեխային ապօրինաբար տեղափոխելու կամ պահելու դեպքում, այն անդամ պետության դատարանները, որտեղ երեխայի բնակության վայրն է, նրան ապօրինաբար տեղափոխելուց կամ պահելուց անմիջապես առաջ, պահպանում են իրենց իրավասությունն այնքան ժամանակ, քանի դեռ երեխան բնակության վայր ձեռք չի բերել մեկ այլ անդամ պետությունում, և՝

ա) երեխայի նկատմամբ խնամքի իրավունքներ ունեցող յուրաքանչյուր անձ, հաստատություն կամ այլ մարմին տվել է իր համաձայնությունը՝ երեխայի տեղափոխման կամ պահման համար,

կամ

բ) երեխան բնակվել է այդ մյուս անդամ պետությունում առնվազն մեկ տարի այն բանից հետո, երբ խնամքի իրավունքներ ունեցող անձը, հաստատությունը կամ այլ մարմին գիտեր կամ պետք է իմանար երեխայի գտնվելու վայրի մասին, և երեխան հաստատվել է իր նոր միջավայրում, և եթե բավարարված է հետևյալ պայմաններից առնվազն մեկը.

i) այն պահից հետո մեկ տարվա ընթացքում, երբ երեխայի նկատմամբ խնամքի իրավունքներ ունեցողն իմացել է կամ պետք է իմանար երեխայի գտնվելու վայրի մասին, երեխային վերադարձնելու դիմում չի ներկայացվել այն անդամ պետության իրավասու մարմիններին, ուր կամ որտեղ երեխան տեղափոխվել կամ պահվել է.

ii) խնամքի իրավունքներ ունեցողի կողմից ներկայացված՝ երեխային վերադարձնելու մասին դիմումը հետ է վերցվել, և «i» կետում նշված ժամկետում նոր դիմում չի ներկայացվել.

iii) ապօրինաբար տեղափոխելուց կամ պահելուց անմիջապես առաջ երեխայի բնակության վայրի անդամ պետության դատարանում քննվող գործը կարճվել է հողված 11«7»-ի համաձայն.

iv) երեխայի վերադարձ չնախատեսող՝ երեխայի նկատմամբ խնամքի մասին վճիռ է կայացվել այն անդամ պետության դատարանների կողմից, որտեղ երեխայի բնակության վայրն է՝ ապօրինաբար տեղափոխվելուց կամ պահվելուց անմիջապես առաջ:

Հոդված 11

Երեխային վերադարձնելը

1. Եթե խնամքի իրավունքներ ունեցող որևէ անձ, հաստատություն կամ այլ մարմին դիմում է անդամ պետության իրավասու մարմիններին, որպեսզի վերջիններս «Երեխայի միջազգային առևանգման քաղաքացիական ասպեկտների մասին» 1980 թվականի հոկտեմբերի 25-ի Հաագայի կոնվենցիայի (այսուհետ՝ «1980 թվականի Հաագայի կոնվենցիա») հիման վրա վճիռ կայացնեն որևէ անդամ պետությունից, բացի ապօրինաբար հեռացնելուց կամ պահելուց առաջ երեխայի բնակության վայրը հանդիսացած անդամ պետությունից, ապօրինի տեղափոխված կամ այնտեղ ապօրինաբար պահվող երեխային վերադարձնելու մասին, ապա գործում են սույն հոդվածի 2-ից 8-րդ պարբերությունները:

2. 1980 թվականի Հաագայի կոնվենցիայի 12-րդ և 13-րդ հոդվածները կիրառելիս պետք է ապահովվել, որպեսզի երեխային իր կարծիքն արտահայտելու հնարավորություն ընձեռվի վարույթի ընթացքում՝ բացառությամբ այն դեպքերի, երբ դա նպատակահարմար չէ՝ հաշվի առնելով նրա տարիքը կամ հասունության աստիճանը:

3. Դատարանը, որին ներկայացվել է 1-ին պարբերությունում նշված դիմումը երեխային վերադարձնելու մասին, պարտավոր է դիմումը քննել արագացված կարգով՝ կիրառելով ներպետական իրավունքով նախատեսված ամենաարագ ընթացակարգերը:

Չսահմանափակելով նախորդ պարբերության գործողությունը՝ դատարանը պարտավոր է, բացառությամբ, երբ բացառիկ հանգամանքները դա թույլ չեն տալիս, վճիռ կայացնել ոչ ուշ, քան դիմումը ներկայացնելուց հետո վեց շաբաթվա ընթացքում:

4. Դատարանը չի կարող մերժել երեխայի վերադարձը 1980 թվականի Հաագայի կոնվենցիայի հոդված 13«բ»-ի հիման վրա, եթե հաստատվում է, որ ձեռնարկվել են բավարար միջոցներ՝ ապահովելու երեխայի պաշտպանությունը նրա վերադարձից հետո:

5. Դատարանը չի կարող մերժել երեխայի վերադարձը, եթե երեխային վերադարձնելու համար դիմած անձին հնարավորություն չի տրվել արտահայտելու իր դիրքորոշումը:

6. Եթե դատարանը, համաձայն 1980 թվականի Հաագայի կոնվենցիայի 13-րդ հոդվածի, որոշում է կայացրել չվերադարձնելու մասին, ապա այն պարտավոր է անմիջապես, անմիջականորեն կամ իր երկրի կենտրոնական մարմնի միջոցով, այդ որոշման և հարակից փաստաթղթերի, մասնավորապես, դատական նիստերի արձանագրության կրկնօրինակն ուղարկել այն անդամ պետության իրավասու դատարանին կամ կենտրոնական մարմնին, որտեղ, այդ պետության ներպետական իրավունքի համաձայն, երեխայի բնակության վայրն է եղել ապօրինաբար տեղափոխվելուց կամ պահվելուց անմիջապես առաջ: Դատարանը պետք է նշված բոլոր փաստաթղթերը ստանա չվերադարձնելու մասին որոշում կայացնելուց հետո մեկ ամսվա ընթացքում:

7. Բացառությամբ այն դեպքերի, երբ ապօրինաբար տեղափոխվելուց կամ պահվելուց անմիջապես առաջ երեխայի բնակության վայրի անդամ պետության դատարաններն արդեն սկսել են քննել կողմերից որևէ մեկի հարուցած հայցը, 6-րդ պարբերությունում նշված տեղեկություններն ստացող դատարանը կամ կենտրոնական մարմինը պարտավոր է դրա մասին ծանուցել կողմերին և հրավիրել նրանց՝ ծանուցման պահից հետո երեք ամսվա ընթացքում ներպետական իրավունքի համաձայն փաստարկներ ներկայացնելու դատարանին, որպեսզի դատարանը կարողանա քննել երեխայի նկատմամբ խնամքի իրավունքի հարցը:

Չսահմանափակելով սույն Կանոնակարգով նախատեսված իրավասության վերաբերյալ նորմերը՝ դատարանը կարճում է գործը, եթե սահմանված ժամկետի ընթացքում փաստարկներ չի ստանում:

8. Անկախ այն հանգամանքից, որ դատարանի կողմից 1980 թվականի Հաագայի կոնվենցիայի 13-րդ հոդվածի համաձայն չվերադարձնելու մասին որոշում է կայացվել, հետագայում սույն Կանոնակարգի համաձայն իրավասություն ունեցող դատարանի կայացրած և երեխայի վերադարձ նախատեսող ցանկացած վճիռ, սույն Կանոնակարգի III գլխի 4-րդ բաժնի համաձայն, ենթակա է կատարման՝ երեխայի անվտանգ վերադարձն ապահովելու համար:

Հոդված 12

Իրավասության համաձայնեցումը (պրոռոգացիա)

1. Անդամ պետության դատարանները, որոնք 3-րդ հոդվածի հիման վրա իրավասու են ամուսնալուծության, առանձին ապրելու կամ ամուսնությունն անվավեր ճանաչելու մասին հայցի նկատմամբ, իրավասություն ունեն նաև տվյալ հայցի հետ կապված՝ ծնողական իրավունքներին վերաբերող ցանկացած հարցի նկատմամբ, եթե՝

ա) ամուսիններից առնվազն մեկը ծնողական իրավունքներ ունի երեխայի նկատմամբ,

և

բ) դատարանի կողմից գործը վարույթ ընդունելու պահին դատարանների իրավասությունն ամուսինների և ծնողական իրավունքներ ունեցողների կողմից ընդունվել է ուղղակիորեն կամ անվերապահորեն՝ այլ եղանակով, և, եթե դա բխում է երեխայի շահերից:

2. 1-ին պարբերության համաձայն վերապահված իրավասությունը դադարում է՝

ա) երբ ամուսնալուծության, առանձին ապրելու կամ ամուսնությունն անվավեր ճանաչելու մասին հայցը բավարարող կամ մերժող վճիռը մտել է օրինական ուժի մեջ.

բ) եթե «ա» կետում նշված ամսաթվի դրությամբ ծնողական իրավունքների մասին գործերով վարույթները դեռ շարունակվում են, երբ այդ գործերով առկա է օրինական ուժի մեջ մտած վճիռ.

գ) երբ «ա» և «բ» պարբերություններում նշված վարույթներն ավարտվել են որևէ այլ պատճառով:

3. Սույն հոդվածի 1-ին պարբերությունում նշված դեպքերից բացի՝ անդամ պետության դատարաններն իրավասություն ունեն ծնողական իրավունքների նկատմամբ այն դեպքում, երբ՝

ա) երեխան սերտ կապ ունի տվյալ անդամ պետության հետ, մասնավորապես, պայմանավորված այն հանգամանքով, որ նրա նկատմամբ ծնողական իրավունքներ ունեցողներից մեկի բնակության վայրը տվյալ անդամ պետությունում է կամ երեխան տվյալ անդամ պետության քաղաքացի է,

և

բ) դատարանում գործի քննության պահին վարույթի բոլոր մասնակիցների կողմից դատարանների իրավասությունն ընդունվել է ուղղակիորեն կամ անվերապահորեն՝ այլ եղանակով, և, եթե դա բխում է երեխայի շահերից:

4. Եթե երեխայի բնակության վայրը գտնվում է որևէ երրորդ պետության տարածքում, որը «Ծնողական իրավունքների վերաբերյալ գործերի նկատմամբ իրավասության, կիրառվելիք իրավունքի, ճանաչման, կատարման և համագործակցության, ինչպես նաև երեխաների պաշտպանության միջոցառումների մասին» 1996 թվականի հոկտեմբերի 19-ի Հաագայի կոնվենցիային չի միացել, ապա, սույն հոդվածով իրավասությունը համարվում է երեխայի շահերից բխող, հատկապես, եթե պարզվում է, որ տվյալ երրորդ պետությունում վարույթ անցկացնելն անհնար է:

Հոդված 13

Իրավասությունը՝ ըստ երեխայի գտնվելու վայրի

1. Այն դեպքում, երբ երեխայի բնակության վայրը հնարավոր չէ պարզել, և իրավասությունը չի կարող որոշվել 12-րդ հոդվածի հիման վրա, իրավասություն կունենան երեխայի գտնվելու վայրի անդամ պետության դատարանները:

2. Սույն հոդվածի 1-ին պարբերությունը կիրառվում է նաև իրենց երկրում տեղի ունեցող անկարգությունների հետևանքով փախստական դարձած կամ այլ երկիր տեղահանված երեխաների նկատմամբ:

Հոդված 14

«Մնացորդային» իրավասություն

Եթե 8–13–րդ հոդվածների համաձայն անդամ պետության ոչ մի դատարան իրավասություն չունի, ապա յուրաքանչյուր անդամ պետությունում իրավասությունը որոշվում է այդ պետության օրենսդրությամբ:

Հոդված 15

Գործի հանձնումը քննելու ավելի լավ հնարավորություն ունեցող դատարանին

1. Եթե գործն ըստ էության քննելու իրավասություն ունեցող անդամ պետության դատարանները գտնում են, որ երեխայի հետ որոշակի կապ ունեցող մեկ այլ անդամ պետության դատարանն ավելի լավ հնարավորություն ունի քննելու գործը կամ դրա որոշակի մասը, և, եթե դա բխում է երեխայի շահերից, ապա այդ դատարանները բացառության կարգով իրավասու են՝

ա) կասեցնել գործը կամ գործի տվյալ մասը և առաջարկել կողմերին, որպեսզի նրանք սույն հոդվածի 4-րդ պարբերության համաձայն դիմում ներկայացնեն այդ այլ անդամ պետության դատարան, կամ

բ) դիմել այլ անդամ պետության դատարանին, որպեսզի վերջինս սույն հոդվածի 5-րդ պարբերության համաձայն ստանձնի իրավասությունը:

2. Սույն հոդվածի 1-ին պարբերությունը կիրառվում է՝

ա) որևէ կողմից դիմում ստանալու դեպքում, կամ

բ) դատարանի նախաձեռնությամբ կամ

գ) սույն հոդվածի 3-րդ պարբերության համաձայն երեխայի հետ որոշակի կապ ունեցող մեկ այլ անդամ պետության դատարանից դիմում ստանալու դեպքում:

Դատարանի նախաձեռնությամբ կամ մեկ այլ անդամ պետության դատարանի դիմումի հիման վրա գործը փոխանցելու համար պահանջվում է կողմերից առնվազն մեկի համաձայնությունը:

3. Սույն հոդվածի 1-ին պարբերության իմաստով երեխան համարվում է որևէ անդամ պետության հետ որոշակի կապ ունեցող, եթե այդ անդամ պետությունը՝

ա) սույն հոդվածի 1-ին պարբերությունում նշված դատարանի կողմից գործը վարույթ ընդունելուց հետո դարձել է երեխայի բնակության վայրը, կամ

բ) երեխայի նախկին բնակության վայրն է կամ

գ) երեխայի քաղաքացիության պետությունն է կամ

դ) ծնողական իրավունքներ ունեցողներից մեկի բնակության վայրն է կամ

ե) այն վայրն է, որտեղ գտնվում է երեխայի գույքը, և գործը վերաբերում է նշված գույքի կառավարման, պահպանության կամ օտարման հետ կապված երեխայի պաշտպանությանը:

4. Գործն ըստ էության քննելու իրավասություն ունեցող անդամ պետության դատարանը սահմանում է մյուս անդամ պետության դատարանի կողմից սույն հոդվածի 1-ին պարբերության համաձայն գործը վարույթ ընդունելու ժամկետը:

Եթե դատարաններն այդ ժամանակահատվածում գործը վարույթ չեն ընդունում, ապա գործը վարույթ ընդունած դատարանը կշարունակի իրավասություն իրականացնել 8-ից 14-րդ հոդվածների համաձայն:

5. Մյուս անդամ պետության դատարանները կարող են ընդունել իրավասությունը, երբ դա, ելնելով գործի կոնկրետ հանգամանքներից, բխում է երեխայի շահերից, պարբերություններ 1«ա»-ի կամ 1«բ»-ի համաձայն իրենց կողմից գործը վարույթ ընդունելուց հետո վեց շաբաթվա ընթացքում: Այդ դեպքում գործը առաջինը վարույթ ընդունած դատարանը պարտավոր է հրաժարվել իրավասությունից: Հակառակ դեպքում, վերջինս շարունակում է իրավասություն իրականացնել 8-ից 14-րդ հոդվածների համաձայն:

6. Դատարանները պարտավոր են, սույն հոդվածի դրույթների իրականացման նպատակով, համագործակցել կամ անմիջականորեն, կամ 53-րդ հոդվածի համաձայն նշանակված կենտրոնական մարմինների միջոցով:

ԲԱԺԻՆ 3

Ընդհանուր դրույթներ

Հոդված 16

Դատարանի կողմից գործը վարույթ ընդունելը

1. Գործը դատարանի կողմից վարույթ ընդունված է համարվում այն պահից՝

ա) երբ վարույթ սկսելու համար հիմք հանդիսացող փաստաթուղթը կամ դրան համարժեք այլ փաստաթուղթ է ներկայացվում դատարան՝ պայմանով, որ դրանից հետո հայցվորը կատարել է այն քայլերը, որոնք նա պարտավոր էր կատարել՝ պատասխանողին այդ փաստաթղթերի հանձնումն ապահովելու համար

կամ,

բ) երբ փաստաթղթերի հանձնման համար պատասխանատու մարմինը ստացել է փաստաթուղթն այն դեպքերում, երբ փաստաթղթի հանձնումը պատասխանողին պետք է կատարվի նախքան այն դատարան ներկայացնելը՝ պայմանով, որ դրանից հետո հայցվորը կատարել է այն քայլերը, որոնք նա պարտավոր էր կատարել փաստաթղթի՝ դատարան ներկայացնելն ապահովելու նպատակով:

Հոդված 17

Իրավասության հարցի քննությունը

Այն դեպքում, երբ որևէ անդամ պետության դատարան սկսել է քննել այնպիսի գործ, որի նկատմամբ այդ դատարանը, սույն Կանոնակարգի համաձայն, իրավասություն չունի, և որի նկատմամբ, սույն Կանոնակարգի համաձայն, իրավասություն ունի մեկ այլ անդամ պետության որևէ դատարան, առաջին դատարանը պարտավոր է սեփական նախաձեռնությամբ հայտարարել իր՝ իրավասություն չունենալու մասին:

Հոդված 18

Ընդունելիության հարցի քննությունը

1. Եթե պատասխանողը, որի բնակության վայրը հայցի հարուցման վայրի անդամ պետությունում չէ, չի ներկայանում դատարան, ապա իրավասություն ունեցող դատարանը պարտավոր է կասեցնել վարույթն այնքան ժամանակով, քանի դեռ չի հիմնավորվել, որ պատասխանողն ի վիճակի է եղել վարույթ հարուցելու մասին փաստաթուղթը կամ համարժեք այլ փաստաթուղթ ստանալ բավականաչափ ժամանակ առաջ, որպեսզի կարողանա նախապատրաստել իր պաշտպանությունը, կամ, որ այդ ուղղությամբ ձեռնարկվել են անհրաժեշտ բոլոր գործողությունները:
2. Սույն հոդվածի 1-ին պարբերության փոխարեն գործում է թիվ 1348/2000 (ԵՀ) կանոնակարգի 19-րդ հոդվածը, եթե վարույթ հարուցելու համար անհրաժեշտ փաստաթուղթը կամ դրան համարժեք փաստաթուղթն անհրաժեշտ է եղել նշված կանոնակարգի համաձայն մեկ անդամ պետությունից ուղարկել մեկ այլ անդամ պետություն:
3. Եթե կիրառելի չեն թիվ 1348/2000 (ԵՀ) կանոնակարգի դրույթները, կիրառվում է «Քաղաքացիական կամ առևտրային գործերով դատական և արտադատական փաստաթղթերն արտերկրում հանձնելու մասին» 1965 թվականի նոյեմբերի 15-ի Հաագայի կոնվենցիայի 15-րդ հոդվածը, եթե վարույթ հարուցելու համար անհրաժեշտ փաստաթուղթը կամ դրան համարժեք փաստաթուղթն անհրաժեշտ է եղել ուղարկել արտերկիր՝ այդ կոնվենցիայի համաձայն:

Հոդված 19

Քննության մեջ գտնվող (Lis pendens) և միմյանց հետ կապված գործերը

1. Երբ ամուսնալուծության, առանձին ապրելու կամ ամուսնությունն անվավեր ճանաչելու մասին միևնույն կողմերի միջև գործը ներկայացվում է տարբեր անդամ պետությունների դատարաններ, գործը երկրորդը վարույթ ընդունած դատարանը սեփական նախաձեռնությամբ կասեցնում է դրա վարույթն այնքան ժամանակով, մինչև որոշվի գործն առաջինը վարույթ ընդունած դատարանի իրավասության հարցը:

2. Երբ նույն երեխայի նկատմամբ ծնողական իրավունքների մասին նույն հիմքով հայցեր են հարուցվում տարբեր անդամ պետությունների դատարաններ, գործը երկրորդը վարույթ ընդունած դատարանը սեփական նախաձեռնությամբ կասեցնում է գործի վարույթն այնքան ժամանակով, մինչև որոշվի գործն առաջինը վարույթ ընդունած դատարանի իրավասության հարցը:

3. Երբ գործն առաջինը վարույթ ընդունած դատարանի իրավասությունը հաստատվում է, գործը երկրորդը վարույթ ընդունած դատարանը հրաժարվում է իրավասությունից՝ հոգուտ առաջին դատարանի:

Այդ դեպքում այն կողմը, որը համապատասխան հայցը հարուցել էր գործը երկրորդը վարույթ ընդունած դատարան, իրավասու է նույն հայցը հարուցել գործն առաջինը վարույթ ընդունած դատարան:

Հոդված 20

Հայցի ապահովման միջոցները

1. Անհետաձգելի դեպքերում սույն Կանոնակարգի դրույթները չպետք է արգելք հանդիսանան անդամ պետության դատարանների կողմից՝ տվյալ պետության տարածքում գտնվող անձանց կամ գույքի նկատմամբ հայցի ապահովման այնպիսի միջոցների ձեռնարկման համար, որոնք նախատեսված են տվյալ պետության իրավունքով, նույնիսկ եթե սույն Կանոնակարգի համաձայն գործն ըստ էության քննելու իրավասությունը պատկանում է մեկ այլ անդամ պետության դատարանին:

2. Սույն հոդվածի 1-ին պարբերությունում նշված միջոցների գործողությունը դադարում է, երբ, սույն Կանոնակարգի համաձայն գործն ըստ էության քննելու իրավասություն ունեցող անդամ պետության դատարանը ձեռնարկել է իր կողմից նպատակահարմար համարվող միջոցները:

ԳԼՈՒԽ III

ՃԱՆԱԶՈՒՄԸ ԵՎ ԿԱՏԱՐՈՒՄԸ

ԲԱԺԻՆ 1

Ճանաչումը

Հոդված 21

Վճռի ճանաչումը

1. Որևէ անդամ պետությունում կայացված վճիռը ճանաչվում է մյուս անդամ պետություններում առանց դրա համար պահանջվող որևէ հատուկ ընթացակարգի:

2. Մասնավորապես, չսահմանափակելով սույն հոդվածի 3-րդ պարբերության գործողությունը, որևէ հատուկ ընթացակարգ չի պահանջվում որևէ անդամ

պետության քաղաքացիական կացության ակտերի գրառումները մեկ այլ անդամ պետությունում ամուսնալուծության, առանձին ապրելու կամ ամուսնությունն անվավեր ճանաչելու մասին կայացված վճռի հիման վրա թարմացնելու համար, եթե այդ անդամ պետության իրավունքի համաձայն տվյալ վճիռը ենթակա չէ հետագա բողոքարկման:

3. Չսահմանափակելով սույն գլխի 4-րդ բաժնի գործողությունը՝ ցանկացած շահագրգիռ անձ իրավասու է, սույն գլխի 2-րդ բաժնով նախատեսված ընթացակարգերի համաձայն, տվյալ վճռի ճանաչման կամ չճանաչման մասին որոշում կայացնելու պահանջ ներկայացնել:

Սույն Կանոնակարգի 68-րդ հոդվածի համաձայն յուրաքանչյուր անդամ պետության կողմից Հանձնաժողովին ծանուցված ցուցակում նշված դատարանի իրավասությունը որոշվում է այն անդամ պետության ներպետական իրավունքի հիման վրա, որտեղ ներկայացվել է ճանաչման կամ չճանաչման մասին պահանջը:

4. Եթե վճռի ճանաչումը՝ որպես միջանկյալ հարց, բարձրացվել է անդամ պետության դատարանում, ապա այդ դատարանն իրավասություն ունի նաև ճանաչման հարցի նկատմամբ:

Հոդված 22

Ամուսնալուծության, առանձին ապրելու կամ ամուսնությունն անվավեր ճանաչելու մասին վճիռները չճանաչելու հիմքերը

Ամուսնալուծության, առանձին ապրելու կամ ամուսնությունն անվավեր ճանաչելու մասին վճիռը ենթակա չէ ճանաչման՝

ա) եթե դրա ճանաչումն ակնհայտորեն հակասում է այն անդամ պետության հանրային կարգին, որտեղ վճռի ճանաչման պահանջ է ներկայացվել:

բ) երբ այն կայացվել է պատասխանողի բացակայությամբ, եթե վերջինս չի ստացել վարույթ հարուցելու համար անհրաժեշտ կամ դրան համարժեք փաստաթուղթ այն ժամանակ և այնպիսի եղանակով, որ նրան հնարավորություն կտար նախապատրաստելու իր պաշտպանությունը՝ բացառությամբ, երբ պարզվում է, որ պատասխանողը անվերապահորեն ընդունել է վճիռը:

գ) եթե այն անհամատեղելի է միևնույն կողմերի միջև որևէ գործով այն անդամ պետությունում կայացված վճռի հետ, որտեղ վճռի ճանաչման պահանջ է ներկայացվել:

դ) եթե այն անհամատեղելի է մեկ այլ անդամ պետությունում կամ որևէ ոչ անդամ պետությունում միևնույն կողմերի միջև որևէ գործով նախկինում կայացված վճռի հետ՝ պայմանով, որ նախկին վճիռը բավարարում է տվյալ անդամ պետությունում ճանաչվելու համար անհրաժեշտ պայմանները:

Հոդված 23

Ծնողական իրավունքների մասին վճիռները չճանաչելու հիմքերը

Ծնողական իրավունքների մասին վճիռը ենթակա չէ ճանաչման՝

ա) եթե դրա ճանաչումն ակնհայտորեն հակասում է այն անդամ պետության հանրային կարգին, որտեղ դրա ճանաչման պահանջ է ներկայացվել՝ հաշվի առնելով երեխայի շահերը.

բ) եթե, բացառությամբ անհետաձգելի դեպքերի, այն կայացվել է՝ առանց հնարավորություն ընձեռելու երեխային արտահայտելու սեփական կարծիքը, ինչը այն անդամ պետության դատավարական հիմնարար սկզբունքների խախտում է, որտեղ դրա ճանաչման պահանջ է ներկայացվել.

գ) եթե այն կայացվել է այն անձի բացակայությամբ, ով չի ստացել վարույթ հարուցելու համար անհրաժեշտ կամ դրան համարժեք փաստաթուղթն այն ժամանակ և այնպիսի եղանակով, որ նրան հնարավորություն կտար նախապատրաստելու իր պաշտպանությունը, եթե չի պարզվում, որ այդ անձն անվերապահորեն ընդունել է վճիռը.

դ) այն անձի պահանջով, որը պնդում է, թե վճիռը ոտնահարում է իր ծնողական իրավունքները, եթե այն կայացվել է՝ տվյալ անձին հնարավորություն չտալով հայտնելու իր կարծիքը.

ե) եթե այն անհամատեղելի է ծնողական իրավունքների մասին այն անդամ պետությունում ավելի ուշ կայացված վճռի հետ, որտեղ վճռի ճանաչման պահանջ է ներկայացվել.

զ) եթե այն անհամատեղելի է մեկ այլ անդամ պետությունում կամ երեխայի բնակության վայրի անդամ չհանդիսացող որևէ պետությունում՝ ծնողական իրավունքների մասին հետագայում կայացված որևէ վճռի հետ՝ պայմանով, որ ավելի ուշ կայացված վճիռը բավարարում է ճանաչվելու համար անհրաժեշտ պայմաններն այն անդամ պետությունում, որտեղ վճռի ճանաչման պահանջ է ներկայացվել,

կամ

է) եթե սույն Կանոնակարգի 56-րդ հոդվածով նախատեսված ընթացակարգը չի պահպանվել:

Հոդված 24

Վճիռը կայացրած դատարանի իրավասության վերանայման արգելքը

Անդամ պետության **վճիռը կայացրած** դատարանի իրավասությունը չի կարող վերանայվել: Հոդվածներ 22«ա»-ում և 23«ա»-ում նշված՝ հանրային կարգի մասին

վերապահումը չի կարող կիրառվել 3-ից 14-րդ հոդվածներով նախատեսված՝
իրավասությանը վերաբերող նորմերի նկատմամբ:

Հոդված 25

Կիրառվող իրավունքում առկա տարբերությունները

Վճռի ճանաչումը չի կարող մերժվել այն հիմքով, որ այն անդամ պետության
իրավունքը, որտեղ դրա ճանաչման պահանջ է ներկայացվել, միևնույն փաստերի
հիման վրա թույլ չի տալիս ամուսնալուծություն, առանձին ապրելու մասին որոշման
կայացում կամ ամուսնության անվավեր ճանաչում:

Հոդված 26

Ըստ էության վերանայման արգելքը

Վճիռը որևէ պարագայում չի կարող վերանայվել ըստ էության:

Հոդված 27

Վարույթի կասեցումը

1. Այն անդամ պետության դատարանը, որտեղ մեկ այլ անդամ պետությունում
կայացված վճռի ճանաչման պահանջ է ներկայացվել, իրավասու է կասեցնել
վարույթը, եթե տվյալ վճռի դեմ սովորական վերաքննիչ բողոք է բերվել:
2. Այն անդամ պետության դատարանը, որտեղ Իռլանդիայում կամ Միացյալ
Թագավորությունում կայացված վճռի ճանաչման պահանջ է ներկայացվել,
իրավասու է կասեցնել վարույթը, եթե վճիռը կայացրած պետությունում վերաքննիչ
բողոքի հետևանքով վճռի կատարումը կասեցվել է:

ԲԱԺԻՆ 2

Վճիռը կատարման ենթակա լինելու մասին որոշում կայացնելու համար ներկայացվող դիմումը

Հոդված 28

Կատարման ենթակա վճիռները

1. Երեխայի նկատմամբ ծնողական իրավունքների իրականացման մասին վճիռը, որը
կայացվել է որևէ անդամ պետությունում, ենթակա է կատարման այդ անդամ

պետությունում և ուղարկվել է կողմերին, ենթակա է կատարման մեկ այլ անդամ պետությունում, եթե, որևէ շահագրգիռ անձի դիմումի հիման վրա, այդ անդամ պետությունում որոշում է կայացվել՝ այն կատարման ենթակա լինելու մասին:

2. Այնուամենայնիվ, Միացյալ Թագավորության դեպքում, նման վճիռն Անգլիայում, Ուելսում, Շոտլանդիայում կամ Հյուսիսային Իռլանդիայում ենթակա է կատարման միայն այն դեպքում, երբ որևէ շահագրգիռ անձի դիմումի հիման վրա, կատարման նպատակով այն գրանցվել է Միացյալ Թագավորության տվյալ մասում:

Հոդված 29

Տեղական դատարանների իրավասությունը

1. Վճիռը կատարման ենթակա լինելու մասին որոշում կայացնելու համար դիմումը ներկայացվում է յուրաքանչյուր անդամ պետության կողմից 68-րդ հոդվածի համաձայն Հանձնաժողովին ներկայացված ցուցակում նշված դատարան:

2. Գործի ընդդատությունը որոշվում է այն անձի բնակության վայրի հիման վրա, որի նկատմամբ վճռի կատարման պահանջ է ներկայացվել, կամ այն երեխայի բնակության վայրի հիման վրա, որի վերաբերյալ դիմում է ներկայացվել:

Երբ նախորդ պարբերությունում նշված վայրերից ոչ մեկը չի գտնվում կատարման անդամ պետության տարածքում, գործի ընդդատությունը որոշվում է վճռի կատարման վայրի հիման վրա:

Հոդված 30

Ընթացակարգը

1. Դիմում ներկայացնելու կարգը որոշվում է վճռի կատարման վայրի անդամ պետության իրավունքով:

2. Դիմողը պարտավոր է ծանուցման նպատակով նշել որոշակի հասցե, որը պետք է գտնվի այն դատարանի իրավասության տակ գտնվող տարածքում, որին ներկայացվել է դիմումը: Այնուամենայնիվ, եթե վճռի կատարման վայրի անդամ պետության իրավունքը չի նախատեսում նման հասցեի տրամադրում, ապա դիմողը պարտավոր է նշանակել տվյալ գործով իր ներկայացուցչին:

3. 37-րդ և 39-րդ հոդվածներում նշված փաստաթղթերը կցվում են դիմումին:

Հոդված 31

Դատարանի որոշումը

1. Դիմումը ստացած դատարանը որոշում է կայացնում անհապաղ: Ոչ անձը, ում նկատմամբ վճռի կատարման պահանջ է ներկայացվել, ոչ երեխան իրավասու չեն վարույթի այս փուլում դիմումի վերաբերյալ որևէ առարկություն ներկայացնել:
2. Դիմումը կարող է մերժվել միայն 22-րդ, 23-րդ և 24-րդ հոդվածներում նշված հիմքերից որևէ մեկով:
3. Վճիռը ոչ մի դեպքում չի կարող վերանայվել ըստ էության:

Հոդված 32

Որոշման մասին ծանուցումը

Դատարանի համապատասխան պաշտոնատար անձը պարտավոր է վճռի կատարման անդամ պետության իրավունքով նախատեսված կարգով դիմողին անհապաղ ծանուցել դիմումի կապակցությամբ կայացված որոշման մասին:

Հոդված 33

Որոշման բողոքարկումը

1. Կողմերից յուրաքանչյուրը կարող է բողոքարկել վճռի կատարման նպատակով ներկայացված դիմումի վերաբերյալ կայացված որոշումը:
2. Բողոքը ներկայացվում է յուրաքանչյուր անդամ պետության կողմից 68-րդ հոդվածի համաձայն Հանձնաժողովին ներկայացված ցուցակում նշված դատարան:
3. Բողոքը քննվում է վիճահարույց խնդիրների լուծման ընթացակարգը սահմանող նորմերի համաձայն:
4. Վճիռը կատարման ենթակա լինելու մասին որոշում կայացնելու համար դիմող կողմից բողոք ներկայացնելու դեպքում այն կողմը, որի նկատմամբ վճռի կատարման պահանջ է ներկայացվել, դատական ծանուցագրով կանչվում է վերաքննիչ դատարան: Վերջինիս չներկայանալու դեպքում, կիրառվում են 18-րդ հոդվածի դրույթները:
5. Վճռի կատարման մասին որոշման դեմ բողոք կարող է ներկայացվել այդ որոշման մասին ծանուցելուց հետո մեկ ամսվա ընթացքում: Եթե կողմը, որի նկատմամբ վճռի կատարման մասին որոշում կայացնելու պահանջ է ներկայացվել, բնակվում է որևէ անդամ պետությունում, բացի այն անդամ պետությունից, որտեղ կայացվել է վճիռը կատարման ենթակա լինելու մասին որոշումը, ապա բողոքարկման ժամկետը 2 ամիս է, որի հաշվարկը սկսվում է ծանուցագիրն առձեռն կամ բնակության վայրում

հանձնելու պահից: Հեռավորության պատճառով նշված ժամկետի երկարաձգում չի թույլատրվում:

Հոդված 34

Վերաքննություն իրականացնող դատարանները և վիճարկման միջոցները

Բողոքի վերաբերյալ կայացված վճիռը կարող է վիճարկվել միայն յուրաքանչյուր անդամ պետության կողմից 68-րդ հոդվածի համաձայն Հանձնաժողովին ներկայացված ցուցակում նշված ընթացակարգերով:

Հոդված 35

Վարույթի կասեցումը

1. Դատարանը, որին 33-րդ կամ 34-րդ հոդվածի հիման վրա ներկայացվում է բողոքը, կարող է, այն անձի դիմումի հիման վրա, որի նկատմամբ վճռի կատարման մասին պահանջ է ներկայացվել, կասեցնել վարույթը, եթե վճռի դեմ սովորական վերաքննիչ բողոք է ներկայացվել վճիռը կայացրած անդամ պետությունում, կամ, եթե նման վերաքննիչ բողոք բերելու համար սահմանված ժամկետը դեռ չի լրացել: Ընդ որում, երկրորդ դեպքում, դատարանը կարող է նշել այն ժամկետը, որի ընթացքում նման բողոքը պետք է ներկայացվի:
2. Եթե վճիռը կայացվել է Իռլանդիայում կամ Միացյալ Թագավորությունում, ապա վերաքննության ցանկացած ձև, որն առկա է վճիռը կայացրած անդամ պետությունում, սույն հոդվածի 1-ին պարբերության նպատակներից ելնելով՝ համարվում է սովորական վերաքննություն:

Հոդված 36

Մասնակի կատարումը

1. Երբ վճիռը կայացվել է մի քանի հարցերի մասին, և եթե դրանց բոլորի վերաբերյալ հնարավոր չէ կայացնել կատարման ենթակա լինելու մասին որոշում, ապա դատարանը այդպիսի որոշում կայացնում է դրանցից միայն մեկի կամ մի քանիսի վերաբերյալ:
2. Դիմողը կարող է պահանջել վճռի մասնակի կատարում:

ԲԱԺԻՆ 3

1-ին և 2-րդ բաժինների համար ընդհանուր դրույթներ

Հոդված 37

Փաստաթղթերը

1. Վճիռը կատարման ենթակա լինելու մասին որոշում կայացնելու, ինչպես նաև վճռի ճանաչման պահանջ ներկայացրած կամ ճանաչումը վիճարկող կողմը պարտավոր է ներկայացնել՝

ա) վճռի այնպիսի պատճեն, որը կհամապատասխանի դրա իսկությունը հաստատելու համար անհրաժեշտ պայմաններին.

բ) 39-րդ հոդվածում նշված տեղեկանքը:

2. Բացի այդ, որևէ կողմի բացակայությամբ կայացված վճռի դեպքում այն կատարման ենթակա լինելու մասին որոշում կայացնելու, ինչպես նաև վճռի ճանաչման պահանջ ներկայացրած կողմը պետք է ներկայացնի՝

ա) այն փաստաթղթի բնօրինակը կամ հաստատված պատճենը, որով հաստատվում է, որ պատասխանող կողմին հանձնվել է վարույթ հարուցելու համար անհրաժեշտ կամ դրան համարժեք փաստաթուղթ.

կամ

բ) ցանկացած փաստաթուղթ, որով հավաստվում է, որ պատասխանողը վճիռն ընդունել է անվերապահորեն:

Հոդված 38

Փաստաթղթերի բացակայությունը

1. Եթե հոդված 37«1»«բ»-ում կամ «2»-ում նշված փաստաթղթերը չեն ներկայացվում, դատարանն իրավասու է սահմանել դրանք ներկայացնելու ժամկետը, ընդունել համարժեք փաստաթղթեր կամ, եթե համարում է, որ ունի բավարար տեղեկություններ, վերացնել այդ փաստաթղթերը ներկայացնելու պահանջը:

2. Դատարանի պահանջի դեպքում պետք է ապահովել նշված փաստաթղթերի թարգմանությունը: Թարգմանությունը պետք է վավերացված լինի անդամ պետություններից որևէ մեկում՝ թարգմանություն վավերացնելու լիազորությամբ օժտված անձի կողմից:

Հոդված 39

Ամուսնական գործերով կայացված վճիռների վերաբերյալ տեղեկանքը և ծնողական իրավունքների մասին գործերով վճիռների վերաբերյալ տեղեկանքը

Ծագման անդամ պետության իրավասու դատարանը կամ իրավասու մարմինը ցանկացած շահագրգիռ կողմի պահանջով տրամադրում է տեղեկանք՝ դրա համար օգտագործելով I հավելվածում նշված օրինակելի ձևաթուղթը (ամուսնական գործերով վճիռների վերաբերյալ) կամ II հավելվածում նշված օրինակելի ձևաթուղթը (ծնողական իրավունքների մասին գործերով վճիռների վերաբերյալ):

ԲԱԺԻՆ 4

Տեսակցելու իրավունքների մասին որոշակի վճիռների և երեխայի վերադարձը պահանջող որոշակի վճիռների կատարումը

Հոդված 40

Գործողության ոլորտը

1. Սույն բաժինը կիրառվում է՝

ա) տեսակցելու իրավունքների նկատմամբ.

բ) երեխային վերադարձնելու նկատմամբ, որը բխում է հոդված 11«8»-ի համաձայն կայացված վճռից:

2. Սույն բաժնի դրույթները չեն արգելում ծնողական իրավունքներ ունեցող անձին, սույն գլխի 1-ին և 2-րդ բաժինների դրույթների համաձայն, դիմում ներկայացնելու վճռի ճանաչման և կատարման մասին:

Հոդված 41

Տեսակցելու իրավունքները

1. Հոդված 40«1»-ում նշված տեսակցելու իրավունքները, որոնք տրվել են անդամ պետությունում կայացված, կատարման ենթակա վճռով, ենթակա են ճանաչման և կատարման այլ անդամ պետությունում առանց դրանց կատարման ենթակա լինելու մասին որոշում կայացնելու և առանց դրանց ճանաչման դեմ առարկելու որևէ հնարավորության, եթե վճիռը ծագման անդամ պետությունում հաստատվել է սույն հոդվածի 2-րդ պարբերությանը համապատասխան:

Նույնիսկ եթե ներպետական իրավունքը չի նախատեսում տեսակցելու իրավունքներ տվող վճռի՝ օրենքի ուժով կատարման ենթակա լինելը, վճիռը կայացրած դատարանն իրավասու է հայտարարել, որ վճիռը ենթակա է կատարման՝ անկախ դրա բողոքարկումից:

2. Վճիռը կայացրած դատարանի դատավորը տրամադրում է 1-ին պարբերությունում նշված տեղեկանքը III հավելվածում նշված օրինակելի ձևաթղթով (տեսակցելու իրավունքների մասին տեղեկանք) միայն հետևյալ դեպքերում.

ա) երբ վճիռը կայացվել է անձի բացակայությամբ, բացակա անձին վարույթ հարուցելու համար անհրաժեշտ կամ դրան համարժեք փաստաթուղթը հանձնվել է այն ժամանակ և այնպիսի եղանակով, որ նրան հնարավորություն կտար նախապատրաստելու իր պաշտպանությունը, կամ անձին հանձնվել է փաստաթուղթը՝ առանց պահպանելու նշված պայմանները, եթե, այնուամենայնիվ, հաստատված է, որ նա անվերապահորեն ընդունել է որոշումը,

բ) շահագրգիռ բոլոր անձանց ընձեռվել է իրենց դիրքորոշումը հայտնելու հնարավորություն

և

գ) երեխային ընձեռվել է իր կարծիքն արտահայտելու հնարավորություն, բացառությամբ, երբ դա համարվել է աննպատակահարմար՝ հաշվի առնելով նրա տարիքը կամ հասունության աստիճանը:

Տեղեկանքը կազմվում է նույն լեզվով, ինչ վճիռը:

3. Երբ վճռի կայացման պահին տեսակցելու իրավունքները կապված են անդրսահմանային իրավիճակի հետ, տեղեկանքը տրվում է ի պաշտոնե (*ex officio*)՝ այն ժամանակ, երբ վճիռը դառնում է կատարման ենթակա, նույնիսկ եթե դա միայն ժամանակավոր բնույթ է կրում: Եթե իրավիճակը հետագայում է ձեռք բերում անդրսահմանային բնույթ, տեղեկանքը տրվում է կողմերից որևէ մեկի դիմումի հիման վրա:

Հոդված 42

Երեխային վերադարձնելը

1. 40«1»«բ» հոդվածում նշված կարգով երեխային վերադարձնելը, որը բխում է որևէ անդամ պետությունում կայացված և կատարման ենթակա վճռից, ճանաչվում է և ենթակա է կատարման մեկ այլ անդամ պետությունում՝ առանց կատարման ենթակա լինելու մասին որոշում կայացնելու և առանց ճանաչման դեմ առարկելու որևէ հնարավորության, եթե վճիռը ծագման անդամ պետությունում հաստատվել է սույն հոդվածի 2-րդ պարբերության համաձայն:

Նույնիսկ եթե ներպետական իրավունքով չի նախատեսվում հոդված 11«բ»«8»-ում նշված՝ երեխային վերադարձնելը պահանջող վճռի կատարման ենթակա լինելու փաստի հաստատում օրենքի ուժով, վճիռը կայացրած դատարանն իրավասու է հայտարարել, որ վճիռը ենթակա է կատարման՝ անկախ դրա բողոքարկումից:

2. Հոդված 40«1»«բ»-ում նշված վճիռը կայացրած դատավորը 1-ին պարբերությունում նշված տեղեկանքը տրամադրում է միայն այն դեպքում, երբ.

ա) երեխային ընձեռվել է իր կարծիքն արտահայտելու հնարավորություն, բացառությամբ, երբ դա համարվել է աննպատակահարմար՝ հաշվի առնելով նրա տարիքը կամ հասունության աստիճանը,

բ) կողմերին ընձեռվել է իրենց կարծիքը հայտնելու հնարավորություն, և

գ) վճիռը կայացնելիս դատարանը հաշվի է առել 1980 թվականի Հաագայի կոնվենցիայի 13-րդ հոդվածի համաձայն ընդունված որոշման կայացման պատճառները և դրա հիմքում ընկած ապացույցները:

Եթե երեխային բնակության վայրի պետություն վերադարձնելուց հետո նրա պաշտպանությունն երաշխավորելու նպատակով դատարանը կամ այլ իրավասու մարմինը ձեռնարկում է որոշակի միջոցներ, ապա տեղեկանքը պետք է պարունակի տեղեկություններ նաև այդ միջոցների մասին:

Վճիռը կայացրած դատարանի դատավորը պարտավոր է սեփական նախաձեռնությամբ տրամադրել նշված տեղեկանքը՝ օգտագործելով IV հավելվածում նշված օրինակելի ձևաթուղթը (երեխային (երեխաներին) վերադարձնելու մասին տեղեկանքը):

Տեղեկանքը կազմվում է նույն լեզվով, ինչ վճիռը:

Հոդված 43

Տեղեկանքի ուղղումը

1. Վճիռը կայացրած անդամ պետության իրավունքը կիրառվում է տեղեկանքի ցանկացած ուղղման նկատմամբ:
2. Տեղեկանքի տրամադրման դեմ հոդվածներ 41«1» կամ 42«1»-ի համաձայն որևէ բողոք չի կարող բերվել:

Հոդված 44

Տեղեկանքի գործողությունը

Տեղեկանքը գործում է միայն այնքանով, որքանով վճիռը ենթակա է կատարման:

Հոդված 45

Փաստաթղթերը

1. Կողմը, որը վճռի կատարման պահանջ է ներկայացրել, ներկայացնում է՝

ա) վճռի այնպիսի պատճեն, որը բավարարում է դրա իսկությունը հաստատելու համար անհրաժեշտ պայմանները

և

բ) հոդվածներ 41«1» կամ 42«1»-ում նշված տեղեկանքը:

2. Սույն հոդվածի դրույթների իրագործման նպատակով՝

- հոդված 41«1»-ում նշված տեղեկանքի հետ միասին պետք է ներկայացնել դրա՝ 12-րդ կետով նախատեսված թարգմանությունը՝ տեսակցելու իրավունքի իրականացման պայմանների վերաբերյալ.

- հոդված 42«1»-ում նշված տեղեկանքի հետ միասին պետք է ներկայացնել դրա՝ 14-րդ կետով նախատեսված թարգմանությունը՝ երեխայի վերադարձն ապահովելու նպատակով ձեռնարկված միջոցների իրականացման պայմանների վերաբերյալ:

Թարգմանությունը պետք է լինի կատարման անդամ պետության պաշտոնական լեզվով կամ պաշտոնական լեզուներից որևէ մեկով, կամ ցանկացած այլ լեզվով, որ ուղղակիորեն ճանաչում է կատարման անդամ պետությունը: Թարգմանությունը պետք է վավերացված լինի անդամ պետություններից որևէ մեկում այդպիսի լիազորությամբ օժտված անձի կողմից:

ԲԱԺԻՆ 5

Նույնական փաստաթղթերը և համաձայնությունները

Հոդված 46

Այն փաստաթղթերը, որոնք պաշտոնապես կազմվել կամ գրանցվել են որպես նույնական փաստաթղթեր և ենթակա են կատարման որևէ անդամ պետությունում, ինչպես նաև կողմերի միջև համաձայնությունները, որոնք ենթակա են կատարման դրանց ընդունման վայրի անդամ պետությունում, պետք է ճանաչվեն և կատարման ենթակա համարվեն նույն պայմաններով, ինչ վճիռները:

ԲԱԺԻՆ 6

Այլ դրույթներ

Հոդված 47

Կատարման կարգը

1. Կատարման կարգը սահմանվում է կատարման անդամ պետության իրավունքով:
2. Ցանկացած վճիռ, որը կայացվել է մեկ այլ անդամ պետության դատարանի կողմից և համարվել կատարման ենթակա համաձայն 2-րդ բաժնի, կամ հաստատվել է

հողվածներ 41«1» կամ 42«1»-ի համաձայն, պետք է կատարվի կատարման անդամ պետությունում նույն պայմաններով, ինչ այդ պետությունում կայացված վճիռները:

Մասնավորապես, հողվածներ 41«1» կամ 42«1»-ի համաձայն հաստատված վճիռը չի կարող կատարվել, եթե այն անհամատեղելի է հետագայում կայացված և կատարման ենթակա մեկ այլ վճռի հետ:

Հոդված 48

Տեսակցելու իրավունքի իրականացման համար անհրաժեշտ գործնական միջոցները

1. Կատարման անդամ պետության դատարանները կարող են գործնական քայլեր ձեռնարկել տեսակցելու իրավունքների իրականացումը կազմակերպելու համար, եթե գործն ըստ էության քննելու իրավասություն ունեցող անդամ պետության դատարանի կայացրած վճռում բավարար չափով նախատեսված չեն անհրաժեշտ պայմաններ կամ նախատեսված պայմանները բավարար չեն, պայմանով, որ պահպանվեն նշված վճռի հիմնական տարրերը:

2. Սույն հոդվածի 1-ին պարբերության համաձայն իրականացված գործնական կազմակերպչական միջոցառումները դադարում են գործն ըստ էության քննելու իրավասություն ունեցող անդամ պետության դատարանի հետագա վճռի համաձայն:

Հոդված 49

Ծախսերը

Սույն գլխի դրույթները, բացառությամբ 4-րդ բաժնի, կիրառվում են նաև սույն Կանոնակարգով նախատեսված դատավարական ծախսերը որոշելիս, ինչպես նաև այդ ծախսերի հետ կապված ցանկացած որոշում կատարելիս:

Հոդված 50

Իրավաբանական օգնությունը

Հայցվորը, ով վճիռը կայացրած անդամ պետությունում իրավաբանական ամբողջական կամ մասնակի օգնություն է ստացել կամ ազատվել ծախսերից, 21-րդ, 28-րդ, 41-րդ, 42-րդ և 48-րդ հոդվածներով նախատեսված վարույթների շրջանակներում օգտվում է կատարման անդամ պետության իրավունքով նախատեսված՝ իրավաբանական օգնության ամենանպաստավոր կամ ծախսերից ազատվելու ամենարևոտագրկուն տարբերակից:

Հոդված 51

Ապահովման միջոց, պարտատոմս կամ դեպոզիտ

Եթե կողմերից մեկն անդամ պետություններից մեկում ներկայացրել է մեկ այլ անդամ պետությունում կայացված վճռի կատարման մասին դիմում, ապա նրանից չի կարող պահանջվել որևէ տեսակի ապահովման միջոց, պարտատոմս կամ դեպոզիտ հետևյալ հիմքերից որևէ մեկով՝

ա) նրա բնակության վայրն այն անդամ պետությունում չէ, որտեղ վճռի կատարման պահանջ է ներկայացվել կամ

բ) նա օտարերկրյա քաղաքացի է, իսկ Միացյալ Թագավորության կամ Իռլանդիայի դեպքում՝ չունի «դոմիցիլիա» այդ անդամ պետություններում:

Հոդված 52

Օրինականացումը կամ նմանատիպ այլ ձևական պահանջները

37-րդ, 38-րդ և 45-րդ հոդվածներում նշված փաստաթղթերի, ինչպես նաև գործով կողմի ներկայացուցիչ նշանակելու մասին փաստաթղթի կապակցությամբ չի կարող պահանջվել օրինականացում կամ նմանատիպ այլ ձևական պահանջների պահպանում:

ԳԼՈՒԽ IV

ԾՆՈՂԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾԵՐՈՎ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

Հոդված 53

Նշանակումը

Յուրաքանչյուր անդամ պետություն նշանակում է մեկ կամ մի քանի կենտրոնական մարմին, որոնք կնպաստեն սույն Կանոնակարգի կիրառմանը, ինչպես նաև նշում դրանցից յուրաքանչյուրի աշխարհագրական կամ գործառության իրավասության շրջանակը: Եթե անդամ պետությունն ստեղծել է մեկից ավելի կենտրոնական մարմին, հաղորդագրությունները պետք է, որպես կանոն, ուղարկվեն ուղղակիորեն այն կենտրոնական մարմին, որն օժտված է համապատասխան իրավասությամբ: Եթե հաղորդագրությունն ուղարկվում է ոչ իրավասու կենտրոնական մարմնին, ապա վերջինս պարտավոր է այն վերահասցեագրել իրավասու կենտրոնական մարմնին՝ այդ մասին տեղյակ պահելով ուղարկողին:

Հոդված 54

Ընդհանուր գործառույթները

Կենտրոնական մարմինները տեղեկություններ են հաղորդում ներպետական օրենքների և ընթացակարգերի մասին, ինչպես նաև միջոցներ են ձեռնարկում սույն Կանոնակարգի կիրառումը բարելավելու և իրենց համագործակցությունը ակտիվացնելու ուղղությամբ: Այդ նպատակով նրանք օգտագործում են Խորհրդի թիվ 2001/470/ԵՀ որոշմամբ ստեղծված քաղաքացիական և առևտրային գործերով Եվրոպական դատական ցանցը:

Հոդված 55

Համագործակցությունը ծնողական իրավունքներին բնորոշ գործերի շուրջ

Կենտրոնական մարմինները, մեկ այլ անդամ պետության կենտրոնական մարմնից կամ, ծնողական իրավունքներ ունեցող անձից դիմում ստանալու դեպքում, համագործակցում են կոնկրետ գործերի շրջանակում՝ ապահովելու սույն Կանոնակարգի նպատակների իրագործումը: Այդ նպատակով նրանք պարտավոր են տվյալ անդամ պետության իրավունքի համաձայն անմիջականորեն կամ պետական իշխանության կամ այլ մարմինների միջոցով ձեռնարկել անհրաժեշտ բոլոր միջոցները անհատական տվյալների պաշտպանության համար, որպեսզի՝

ա) հավաքեն և փոխանակեն տեղեկություններ.

i) երեխայի վիճակի վերաբերյալ.

ii) բոլոր ընթացիկ վարույթների վերաբերյալ կամ

iii) երեխայի առնչությամբ կայացված որոշումների վերաբերյալ.

բ) տեղեկություններ տրամադրել և աջակցություն ցուցաբերել ծնողական իրավունքներ ունեցող այն անձանց, որոնք տվյալ անդամ պետությունում, մասնավորապես, տեսակցելու իրավունքների և երեխային վերադարձնելու մասին որոշումների ճանաչման և կատարման պահանջ են ներկայացրել.

գ) նպաստել դատարանների միջև համագործակցությանը, հատկապես, հոդվածներ 11«6» և «7» ինչպես նաև 15-րդ ի կիրառման նպատակով,

դ) տրամադրել այնպիսի տեղեկություններ և ցուցաբերել այնպիսի աջակցություն, որոնք դատարաններին անհրաժեշտ են 56-րդ հոդվածը կիրառելու համար և

ե) նպաստել ծնողական իրավունքներ ունեցող անձանց միջև համաձայնության կայացմանը՝ միջնորդությամբ կամ այլ եղանակներով, ինչպես նաև նպաստել այս ոլորտում միջսահմանային համագործակցությանը:

Հոդված 56

Երեխայի տեղավորումը մեկ այլ անդամ պետությունում

1. Եթե 8-15-րդ հոդվածների համաձայն իրավասություն ունեցող դատարանը դիտարկում է երեխային խնամող հաստատությունում կամ խնամատար ընտանիքում տեղավորելու հնարավորությունը, և եթե այդ տեղավորումը պետք է լինի մեկ այլ անդամ պետությունում, դատարանը պետք է նախևառաջ խորհրդակցի այդ անդամ պետության կենտրոնական մարմնի կամ իրավասու այլ մարմնի հետ, եթե այդ անդամ պետությունում երեխայի տեղավորման գործերով պահանջվում է պետական մարմնի միջամտությունը:

2. Սույն հոդվածի 1-ին պարբերությունում նշված՝ երեխայի տեղավորման մասին վճիռը կարող է կայացվել դիմող պետությունում միայն այն դեպքում, երբ դիմումը ստացող պետության իրավասու մարմինները տվել են իրենց համաձայնությունը երեխայի տեղավորմանը:

3. Սույն հոդվածի 1-ին և 2-րդ պարբերություններում նշված խորհրդակցության կամ համաձայնեցման ընթացակարգերը կարգավորվում են դիմումը ստացող պետության ներպետական իրավունքով:

4. Եթե 8-15-րդ հոդվածների համաձայն իրավասություն ունեցող դատարանը որոշում է երեխային տեղավորել մանկատանը կամ խնամատար ընտանիքում, և եթե այդ տեղավորումն այլ անդամ պետությունում է, և այդ անդամ պետությունում երեխայի տեղավորման գործերով չի պահանջվում պետական մարմնի միջամտությունը, ապա որոշում կայացնող մարմինն այդ մասին տեղեկացնում է տեղավորման անդամ պետության կենտրոնական մարմնին կամ իրավասու այլ մարմնին:

Հոդված 57

Աշխատանքային մեթոդը

1. Ծնողական իրավունքներ ունեցող ցանկացած անձ իրավասու է իր բնակության վայրի անդամ պետության կենտրոնական մարմին կամ երեխայի բնակության կամ գտնվելու վայրի անդամ պետության կենտրոնական մարմին դիմում ներկայացնել աջակցության մասին՝ 55-րդ հոդվածում նշված կարգով: Դիմումը, որպես կանոն, պետք է ներառի դրա կատարման համար անհրաժեշտ բոլոր տեղեկությունները: Եթե աջակցության մասին դիմումը վերաբերում է ծնողական իրավունքների մասին սույն Կանոնակարգի գործողության ոլորտի մեջ մտնող որևէ վճռի ճանաչմանը կամ կատարմանը, ապա ծնողական իրավունքներ ունեցող անձը պարտավոր է դիմումին կից ներկայացնել հոդվածներ 39, 41«1» կամ 42«1»-ով նախատեսված համապատասխան տեղեկանքները:

2. Անդամ պետությունները տեղեկացնում են Հանձնաժողովին Համայնքի կառույցների՝ իրենց լեզվից կամ լեզուներից բացի այլ պաշտոնական լեզվի կամ լեզուների մասին, որով կարող են ընդունվել կենտրոնական մարմիններին ուղղված հաղորդագրությունները:

3. 55-րդ հոդվածի համաձայն կենտրոնական մարմինների կողմից ցուցաբերվող աջակցությունը պետք է լինի անվճար:

4. Յուրաքանչյուր կենտրոնական մարմին ինքն է հոգում իր ծախսերը:

Հոդված 58

Հանդիպումները

1. Սույն Կանոնակարգի կիրառմանը նպաստելու համար կենտրոնական մարմինները պարբերաբար հանդիպումներ են անցկացնում:

2. Նշված հանդիպումները պետք է գումարվեն «Քաղաքացիական և առևտրային գործերով եվրոպական դատական ցանցի ստեղծման մասին» Խորհրդի 2001 թվականի մայիսի 28-ի 2001/470/ԵՀ որոշմանը համապատասխան:

ԳԼՈՒԽ V

ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆԸ ԱՅԼ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՀԵՏ

Հոդված 59

Առնչությունը այլ փաստաթղթերի հետ

1. Սույն Կանոնակարգի 60-րդ, 63-րդ և 64-րդ հոդվածների, ինչպես նաև սույն հոդվածի 2-րդ պարբերության դրույթների պահպանմամբ՝ սույն Կանոնակարգը անդամ պետությունների համար գերակայում է սույն Կանոնակարգն ուժի մեջ մտնելու պահին գործող բոլոր կոնվենցիաների նկատմամբ, որոնք կնքվել են երկու կամ ավելի անդամ պետությունների միջև և վերաբերում են սույն Կանոնակարգով կարգավորվող հարաբերություններին:

2.

ա) Ֆինլանդիան և Շվեդիան իրավասու են հայտարարելու, որ 1931 թվականի փետրվարի 6-ին Դանիայի, Ֆինլանդիայի, Իսլանդիայի, Նորվեգիայի և Շվեդիայի միջև կնքված՝ ամուսնության, որդեգրման և խնամակալության վերաբերյալ միջազգային մասնավոր իրավունքի նորմեր պարունակող կոնվենցիան, ինչպես նաև դրան կից եզրափակիչ արձանագրությունը լիովին կամ մասամբ կիրառվում են նրանց միջև փոխադարձ հարաբերություններում՝ սույն Կանոնակարգի նորմերի փոխարեն: Նման հայտարարությունները կցվում են սույն Կանոնակարգին և հրապարակվում Եվրոպական միության պաշտոնական տեղեկագրում: Նշված անդամ պետությունները կարող են ցանկացած պահի մասամբ կամ ամբողջությամբ հետ վերցնել այդ հայտարարությունները:

բ) Միության քաղաքացիների միջև քաղաքացիության հիմքով խտրականության բացառման սկզբունքը պետք է պահպանել:

զ) «ա» ենթակետում նշված՝ անդամ պետությունների միջև սույն Կանոնակարգով կարգավորվող հարաբերությունների վերաբերյալ կնքվելիք հետագա համաձայնագրերում իրավասության վերաբերյալ նորմերը պետք է համապատասխանեն սույն Կանոնակարգով ամրագրված նորմերին:

դ) «ա» ենթակետում նշված հայտարարությունը արած Սկանդինավյան պետություններից որևէ մեկում սույն Կանոնակարգի II գլխով նախատեսված իրավասության հիմքերից որևէ մեկին համապատասխանող հիմքով կայացված վճիռները ճանաչվում և կատարվում են մյուս անդամ պետություններում սույն Կանոնակարգի III գլխով նախատեսված նորմերի համաձայն:

3. Անդամ պետությունները ուղարկում են Հանձնաժողովին՝

ա) պարբերություն 2«ա» և «գ»-ում նշված համաձայնագրերի և դրանք կիրարկող միասնական օրենքների պատճենները.

բ) այդ համաձայնագրերում և միասնական օրենքներում կատարված բոլոր փոփոխությունները, ինչպես նաև դրանց ցանկացած չեղյալ հայտարարում:

Հոդված 60

Առնչությունը որոշ բազմակողմ կոնվենցիաների հետ

Անդամ պետությունների միջև հարաբերություններում սույն Կանոնակարգը գերակայում է հետևյալ կոնվենցիաների նկատմամբ այնքանով, որքանով վերջիններս վերաբերում են սույն Կանոնակարգով կարգավորվող հարաբերություններին՝

ա) «Անչափահասների պաշտպանության նկատմամբ իրավասու մարմինների լիազորությունների և կիրառվող իրավունքի մասին» 1961 թվականի հոկտեմբերի 5-ի Հաագայի կոնվենցիա.

բ) «Ամուսնությունների վավերության մասին որոշումների ճանաչման մասին» 1967 թվականի սեպտեմբերի 8-ի Լյուքսեմբուրգի կոնվենցիա.

գ) «Ամուսնալուծությունների և առանձին ապրելու մասին որոշումների ճանաչման մասին» 1970 թվականի հունիսի 1-ի Հաագայի կոնվենցիա.

դ) «Երեխաների նկատմամբ խնամքի մասին որոշումների ճանաչման և կատարման, ինչպես նաև երեխաների նկատմամբ խնամքի վերականգնման մասին» 1980 թվականի մայիսի 20-ի Եվրոպական կոնվենցիա

և

ե) «Երեխայի միջազգային առևանգման քաղաքացիական ասպեկտների մասին» 1980 թվականի հոկտեմբերի 25-ի Հաագայի կոնվենցիա:

Հոդված 61

Առնչությունը «Օնոդական իրավունքների վերաբերյալ գործերի նկատմամբ իրավասության, կիրառվելիք իրավունքի, ճանաչման, կատարման և համագործակցության, ինչպես նաև երեխաների պաշտպանության միջոցառումների մասին» 1996 թվականի հոկտեմբերի 19-ի Հաագայի կոնվենցիայի հետ

Ինչ վերաբերում է «Օնոդական իրավունքների վերաբերյալ գործերի նկատմամբ իրավասության, կիրառվելիք իրավունքի, ճանաչման, կատարման և համագործակցության, ինչպես նաև երեխաների պաշտպանության միջոցառումների մասին» 1996 թվականի հոկտեմբերի 19-ի Հաագայի կոնվենցիայի հետ առնչությանը, ապա սույն Կանոնակարգը կիրառվում է՝

ա) այն դեպքում, երբ տվյալ երեխայի բնակության վայրը անդամ պետություններից որևէ մեկի տարածքում է.

բ) անդամ պետություններից որևէ մեկի դատարանի վճռի՝ մեկ այլ անդամ պետության տարածքում ճանաչման և կատարման նկատմամբ, նույնիսկ, եթե տվյալ երեխայի բնակության վայրը որևէ երրորդ պետության տարածքում է, որը նշված Կոնվենցիայի Պայմանավորվող կողմ է:

Հոդված 62

Գործողության ոլորտը

1. Հոդվածներ 59«1», 60 և 61–ում նշված համաձայնագրերը և կոնվենցիաները շարունակում են կիրառվել սույն Կանոնակարգով չկարգավորող հարաբերությունների նկատմամբ:

2. 60-րդ հոդվածում նշված կոնվենցիաները, մասնավորապես, 1980 թվականի Հաագայի կոնվենցիան, շարունակում են կիրառվել դրանց մասնակից անդամ պետությունների միջև հարաբերությունների նկատմամբ՝ սույն Կանոնակարգի 60-րդ հոդվածին համապատասխան:

Հոդված 63

Համաձայնագրերը Վատիկանի հետ

1. Սույն Կանոնակարգի կիրառումը չի սահմանափակում Վատիկանի և Պորտուգալիայի միջև 1940 թվականի մայիսի 7-ին Վատիկան քաղաքում ստորագրված միջազգային համաձայնագրի (կոնկորդատի) գործողությունը:

2. 1-ին պարբերությունում նշված համաձայնագրի հիման վրա կայացված՝ ամուսնության անվավերության մասին ցանկացած որոշում ճանաչվում է անդամ

պետություններում սույն Կանոնակարգի III գլխի 1-ին բաժնով նախատեսված պայմաններով:

3. 1-ին և 2-րդ պարբերություններով նախատեսված պայմանները տարածվում են Վատիկանի հետ կնքված հետևյալ միջազգային համաձայնագրերի (կոնկորդատների) վրա՝

ա) 1929 թվականի փետրվարի 11-ին Իտալիայի և Վատիկանի միջև կնքված ու 1984 թվականի փետրվարի 18-ին Հռոմում ստորագրված, լրացուցիչ արձանագրությամբ փոփոխված "Concordato lateranense".

բ) Վատիկանի և Իսպանիայի միջև իրավական հարցերի մասին 1979 թվականի հունվարի 3-ի համաձայնագիրը:

4. 2-րդ պարբերությամբ նախատեսված որոշումների ճանաչումը կարող է Իտալիայում կամ Իսպանիայում կարգավորվել նույն ընթացակարգերով և ստուգումներով, որոնք կիրառվում են 3-րդ պարբերությունում նշված՝ Վատիկանի հետ կնքված միջազգային համաձայնագրերի հիման վրա ստեղծված եկեղեցական դատարանների կայացրած որոշումների վրա:

5. Անդամ պետությունները Հանձնաժողովին են ուղարկում՝

ա) 1-ին և 3-րդ պարբերություններում նշված համաձայնագրերից յուրաքանչյուրի պատճենը.

բ) նշված համաձայնագրերում կատարված ցանկացած փոփոխություն կամ դրանց չեղյալ հայտարարում:

ԳԼՈՒԽ VI

ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 64

1. Սույն Կանոնակարգի դրույթները տարածվում են միայն սույն Կանոնակարգի 72-րդ հոդվածով նախատեսված՝ ուժի մեջ մտնելու ամսաթվից հետո հարուցված վարույթների, որպես նույնական փաստաթղթեր պաշտոնապես կազմված կամ գրանցված փաստաթղթերի և կնքված համաձայնագրերի նկատմամբ:

2. Վճիռները, որոնք կայացվել են սույն Կանոնակարգն ուժի մեջ մտնելու օրվանից հետո այնպիսի վարույթներում, որոնք հարուցվել են նախքան այդ օրը, բայց

1347/2000 (ԵՀ) կանոնակարգն ուժի մեջ մտնելու օրվանից հետո, ճանաչվում և կատարվում են սույն Կանոնակարգի III գլխի դրույթներին համապատասխան՝ պայմանով, որ իրավասությունը հիմնվել է այնպիսի կանոնների վրա, որոնք համահունչ են սույն Կանոնակարգի II գլխով կամ Խորհրդի 1347/2000 (ԵՀ) կանոնակարգով նախատեսված կանոններին, կամ ծագման անդամ պետության

և դիմումը ստացող անդամ պետության միջև կնքված և վարույթ հարուցելու պահին գործող որևէ կոնվենցիայով նախատեսված կանոններին:

3. Վճիռները, որոնք կայացվել են սույն Կանոնակարգն ուժի մեջ մտնելու օրվանից առաջ այնպիսի վարույթներում, որոնք հարուցվել են 1347/2000 (ԵՀ) կանոնակարգն ուժի մեջ մտնելուց հետո, ճանաչվում և կատարվում են սույն Կանոնակարգի III գլխի դրույթներին համապատասխան, եթե դրանք վերաբերում են ամուսնալուծությանը, առանձին ապրելուն կամ ամուսնությունն անվավեր ճանաչելուն կամ նման ամուսնական գործերով վարույթների շրջանակում՝ ամուսիններից ծնված երեխաների նկատմամբ ծնողական իրավունքներին:

4. Վճիռները, որոնք կայացվել են սույն Կանոնակարգն ուժի մեջ մտնելու օրվանից առաջ, սակայն, 1347/2000 (ԵՀ) կանոնակարգն ուժի մեջ մտնելուց հետո այնպիսի վարույթներում, որոնք հարուցվել են 1347/2000 (ԵՀ) կանոնակարգն ուժի մեջ մտնելուց առաջ, ճանաչվում և կատարվում են սույն Կանոնակարգի III գլխի դրույթներին համապատասխան, եթե դրանք վերաբերում են ամուսնալուծությանը, առանձին ապրելուն կամ ամուսնությունն անվավեր ճանաչելուն կամ նման ամուսնական գործերով վարույթների շրջանակում ամուսիններից ծնված երեխաների նկատմամբ ծնողական իրավունքներին, և, եթե իրավասությունը հիմնվել է այնպիսի կանոնների վրա, որոնք համահունչ են եղել սույնի Կանոնակարգի II գլխով կամ Խորհրդի 1347/2000 (ԵՀ) կանոնակարգով նախատեսված կանոններին կամ վճիռը կայացրած անդամ պետության և դիմումն ստացող անդամ պետության միջև կնքված և վարույթ հարուցելու պահին գործող որևէ կոնվենցիայով նախատեսված կանոններին:

ԳԼՈՒԽ VII

ԵԶՐԱՓՈՒԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 65

Վերանայումը

Հանձնաժողովը 2012 թվականի հունվարի 1-ից ոչ ուշ, իսկ դրանից հետո հինգ տարին մեկ անգամ, Եվրոպական պառլամենտին, Խորհրդին ու Եվրոպական տնտեսական և սոցիալական հարցերով հանձնաժողովին է ներկայացնում սույն Կանոնակարգի կիրառման մասին զեկույց՝ անդամ պետությունների ներկայացրած տեղեկությունների հիման վրա: Անհրաժեշտության դեպքում, զեկույցին կից ներկայացվում են սույն Կանոնակարգում փոփոխություններ կատարելու վերաբերյալ առաջարկներ:

Հոդված 66

Երկու կամ ավելի իրավական համակարգեր ունեցող անդամ պետությունները

Այն անդամ պետության մասով, որի տարբեր տարածքային միավորներում սույն Կանոնակարգով կարգավորվող հարաբերությունների նկատմամբ կիրառվում են իրավունքի կամ նորմերի երկու կամ ավելի համակարգեր՝

ա) անդամ պետությունում բնակչության վայր ունենալու մասին հիշատակումը վերաբերում է բնակչության վայրին՝ դրա որևէ տարածքային միավորում

բ) քաղաքացիության, իսկ Միացյալ Թագավորության դեպքում՝ «դոմիցիլիայի» մասին հիշատակումը վերաբերում է տվյալ պետության իրավունքով նախատեսված տարածքային միավորին.

գ) անդամ պետության իրավասու մարմնի մասին հիշատակումը վերաբերում է տվյալ պետության համապատասխան տարածքային միավորի իրավասու մարմնին.

դ) դիմումն ստացող անդամ պետության նորմերի մասին հիշատակումը վերաբերում է այն տարածքային միավորի նորմերին, որտեղ ծագել է իրավասության, ճանաչման կամ կատարման խնդիրը:

Հոդված 67

Կենտրոնական մարմինների մասին տեղեկությունները և ընդունելի լեզուները

Անդամ պետությունները, սույն Կանոնակարգն ուժի մեջ մտնելուց հետո երեք ամսվա ընթացքում, Հանձնաժողովին հաղորդում են.

ա) 53-րդ հոդվածի համաձայն նշանակված կենտրոնական մարմինների անվանումները, հասցեները և հաղորդակցության միջոցները.

բ) հոդված 57«2»-ի համաձայն կենտրոնական մարմինների համար ընդունելի՝ հաղորդակցության լեզուները

և

գ) հոդված 45«2»-ի համաձայն տրվող՝ տեսակցելու իրավունքների մասին տեղեկանքի ներկայացման համար հաղորդակցության ընդունելի լեզուները:

Անդամ պետությունները տեղեկացնում են Հանձնաժողովին նշված տեղեկությունների ցանկացած փոփոխության մասին:

Հանձնաժողովը պարտավոր է նշված տեղեկությունները հասանելի դարձնել հանրությանը:

Հոդված 68

Դատարանների և բողոքարկման ընթացակարգերի վերաբերյալ տեղեկությունները

Անդամ պետությունները ծանուցում են Հանձնաժողովին 21-րդ, 29-րդ, 33-րդ և 34-րդ հոդվածներում նշված դատարանների ցուցակների և բողոքարկման ընթացակարգերի, ինչպես նաև դրանցում կատարված բոլոր փոփոխությունների մասին:

Հանձնաժողովը թարմացնում է այդ տեղեկությունները և հանրությանը մատչելի դարձնում Եվրոպական միության պաշտոնական տեղեկագրի և համապատասխան այլ միջոցներով:

Հոդված 69

Հավելվածներում կատարվող փոփոխությունները

I-IV հավելվածներում զետեղված օրինակելի ձևաթղթերում կատարվող ցանկացած փոփոխություն պետք է ընդունվի՝ հոդված 70«2»-ով սահմանված խորհրդակցական ընթացակարգին համապատասխան:

Հոդված 70

Կոմիտեն

1. Հանձնաժողովին աջակցում է Կոմիտեն:
2. Այն դեպքում, երբ հղում է արվում սույն պարբերությանը, կիրառվում են 1999/468/ԵՀ որոշման 3-րդ և 7-րդ հոդվածները:
3. Կոմիտեն ընդունում է իր ընթացակարգային կանոնները:

Հոդված 71

Թիվ 1347/2000 (ԵՀ) կանոնակարգն ուժը կորցրած ճանաչելը

1. Սույն Կանոնակարգն ուժի մեջ մտնելու օրվանից թիվ 1347/2000 (ԵՀ) կանոնակարգն ուժը կորցրած է ճանաչվում:
2. Թիվ 1347/2000 (ԵՀ) կանոնակարգին ցանկացած հղում պետք է մեկնաբանել որպես հղում սույն Կանոնակարգին՝ V հավելվածում նշված համեմատական աղյուսակին համապատասխան:

Հոդված 72

Ուժի մեջ մտնելը

Սույն Կանոնակարգն ուժի մեջ է մտնում 2004 թվականի օգոստոսի 1-ից:

Սույն Կանոնակարգը գործում է 2005 թվականի մարտի 1-ից՝ բացառությամբ 67-րդ, 68-րդ, 69-րդ և 70-րդ հոդվածների, որոնք կգործեն 2004 թվականի օգոստոսի 1-ից:

Սույն Կանոնակարգն ամբողջությամբ պարտադիր է և անդամ պետություններում գործում է անմիջականորեն՝ Եվրոպական համայնքի հիմնադրման մասին համաձայնագրին համապատասխան:

Կատարված է Բրյուսելում, 2003 թվականի նոյեմբերի 27-ին:

Խորհրդի կողմից՝

Նախագահ

Ռ. Կաստելլի

ՀԱՎԵԼՎԱԾ I

39-ՐԴ ՀՈԴՎԱԾՈՒՄ ԵՇՎԱԾ՝ ԱՄՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԵՐՈՎ ԿԱՅԱՑՎԱԾ ՎՃԻՌՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ ՏԵՂԵԿԱՆՔ¹

1. Ծագման անդամ պետությունը
2. Տեղեկանքը սվող դատարանը կամ իրավասու մարմինը
 - 2.1. Անվանումը
 - 2.2. Հասցեն
 - 2.3. Հեռ./ֆաքս/էլ-փոստը
3. Ամուսնությունը
 - 3.1. Կինը
 - 3.1.1. Լրիվ անունը
 - 3.1.2. Հասցեն
 - 3.1.3. Ծննդավայրը և երկիրը
 - 3.1.4. Ծննդյան օրը, ամիսը, տարեթիվը
 - 3.2. Ամուսինը
 - 3.2.1. Լրիվ անունը
 - 3.2.2. Հասցեն
 - 3.2.3. Ծննդավայրը և երկիրը
 - 3.2.4. Ծննդյան օրը, ամիսը, տարեթիվը
 - 3.3. Ամուսնության երկիրը, վայրը (եթե առկա է) և ամսաթիվը
 - 3.3.1. Ամուսնության երկիրը
 - 3.3.2. Ամուսնության վայրը (որտեղ անհրաժեշտ է)
 - 3.3.3. Ամուսնության ամսաթիվը
4. Դատարանը, որը կայացրել է վճիռը
 - 4.1. Դատարանի անվանումը
 - 4.2. Դատարանի գտնվելու վայրը
5. Վճիռը
 - 5.1. Ամսաթիվ

¹ «Ամուսնական գործերով և ծնողական իրավունքների վերաբերյալ գործերով իրավասության և վճիռների ճանաչման ու կատարման մասին» Խորհրդի 2003 թվականի նոյեմբերի 27-ի 2201/2003 (ԵՀ) կանոնակարգը, որով ուժը կորցրած է ճանաչվել թիվ 1347/2000 (ԵՀ) կանոնակարգը:

5.2. Գործի համարը

5.3. Վճռի տեսակը

5.3.1. Ամուսնալուծությունը

5.3.2. Ամուսնությունը չեղյալ հայտարարելը

5.3.3. Առանձին ապրելը

5.4. Արդյո՞ք վճիռը կայացվել է կողմի բացակայությամբ:

5.4.1. Ոչ

5.4.2. Այո¹

6. Կողմերի անունները, որոնց իրավաբանական օգնություն է տրամադրվել:

7. Արդյո՞ք վճիռը ենթակա է հետագա բողոքարկման՝ համաձայն տվյալ անդամ պետության իրավունքի:

7.1. Ոչ

7.2. Այո

8. Անդամ պետությունում, որտեղ կայացվել է վճիռը, իրավաբանական ուժ ստանալու օրը, ամիսը, տարեթիվը

8.1. Ամուսնալուծությունը

8.2. Առանձին ապրելը

Կատարված է ..., ամսաթիվը ...

Ստորագրությունը և(կամ) կնիքը

¹ Պետք է կցվեն հոդված 37«2»-ում նշված փաստաթղթերը:

ՀԱՎԵԼՎԱԾ II

39-ՐԴ ՀՈՂՎԱԾՈՒՄ ՆՇՎԱԾ՝ ԾՆՈՂԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ ԳՈՐԾԵՐՈՎ ԿԱՅԱՑՎԱԾ ՎՃԻՌՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ ՏԵՂԵԿԱՆՔ (1)

1. Ծագման անդամ պետությունը
 2. Տեղեկանքը սվոդ դատարանը կամ իրավասու մարմինը
 - 2.1. Անվանումը
 - 2.2. Հասցեն
 - 2.3. Հեռ./ֆաքս/էլ-փոստը
 3. Տեսակցելու իրավունք ունեցող անձը (անձինք)
 - 3.1. Լրիվ անունը
 - 3.2. Հասցեն
 - 3.3. Ծննդյան օրը, ամիսը, տարեթիվը և վայրը (որտեղ անհրաժեշտ է)
 4. Ծնողական իրավունքներ ունեցող անձինք՝ բացի 3(2)–ում նշված անձանցից
 - 4.1. 4.1.1. Լրիվ անունը
 - 4.1.2. Հասցեն
 - 4.1.3. Ծննդյան օրը, ամիսը, տարեթիվը և վայրը (եթե առկա է)
 - 4.2. 4.2.1. Լրիվ անունը
 - 4.2.2. Հասցեն
 - 4.2.3. Ծննդյան օրը, ամիսը, տարեթիվը և վայրը (եթե առկա է)
- 4.3. 4.3.1. Լրիվ անունը
- 4.3.2. Հասցեն
- 4.3.3. Ծննդյան ամսաթիվը և վայրը (եթե առկա է)
5. Դատարանը, որը կայացրել է վճիռը
 - 5.1. Դատարանի անվանումը
 - 5.2. Դատարանի գտնվելու վայրը
6. Վճիռը
 - 6.1. Ամսաթիվը
 - 6.2. Գործի համարը

¹ «Ամուսնական գործերով և ծնողական իրավունքների վերաբերյալ գործերով իրավասության և վճիռների ճանաչման ու կատարման մասին» Խորհրդի 2003 թվականի նոյեմբերի 27-ի 2201/2003 (ԵՀ) կանոնակարգը, որով ուժը կորցրած է ճանաչվել թիվ 1347/2000 (ԵՀ) կանոնակարգը:

² Համատեղ ինամքի դեպքում 3-րդ կետում արդեն նշված անձը կարող է նշվել նաև 4-րդ կետում:

6.3. Արդյո՞ք վճիռը կայացվել է կողմի բացակայությամբ:

6.3.1. Ոչ

6.3.2. Այո ⁽¹⁾

7. Վճռում նշված երեխաները ⁽²⁾

7.1. Լրիվ անունը և ծննդյան օրը, ամիսը, տարեթիվը

7.2. Լրիվ անունը և ծննդյան օրը, ամիսը, տարեթիվը

7.3. Լրիվ անունը և ծննդյան օրը, ամիսը, տարեթիվը

7.4. Լրիվ անունը և ծննդյան օրը, ամիսը, տարեթիվը

8. Կողմերի անունները, որոնց իրավաբանական օգնություն է ցուցաբերվել

9. Կատարման և հանձնման հավաստումը

9.1. Արդյո՞ք վճիռը ենթակա է կատարման՝ համաձայն տվյալ անդամ պետության իրավունքի:

9.1.1. Այո

9.1.2. Ոչ

9.2. Արդյո՞ք կատարվել է այն կողմի վերաբերյալ դատարանի որոշումը, որի դեմ վճռի կատարման պահանջ է ներկայացվել:

9.2.1. Այո

9.2.1.1. Կողմի լրիվ անունը

9.2.1.2. Հասցեն

9.2.1.3. Հանձնման ամսաթիվը

9.2.2. Ոչ

10. Տեսակցելու իրավունքի մասին վճիռների վերաբերյալ հատուկ տեղեկություններ, որտեղ 28-րդ հոդվածի համաձայն այլ երկրում կայացված դատական վճռի կատարման պահանջ է ներկայացվում: Նման հնարավորություն նախատեսվում է հոդված 40«2»-ով.

10.1. Գործնական միջոցներ՝ տեսակցելու իրավունքների իրականացման համար (վճռում նշված սահմաններում)

10.1.1. Օրը, ամիսը, տարեթիվը և ժամը

10.1.1.1. Սկիզբը

10.1.1.2. Ավարտը

10.1.2. Վայրը

¹ Պետք է կցել հոդված 37«2»-ում նշված փաստաթղթերը:

² Եթե երեխաների թիվը գերազանցում է չորսը, պետք է օգտագործել առանձին ձևաթուղթ:

10.1.3. Ծնողական իրավունքներ ունեցողների հատուկ պարտավորությունները

10.1.4. Տեսակցելու իրավունք ունեցող անձի հատուկ պարտավորությունները

10.1.5. Տեսակցելու իրավունքի իրականացման հետ կապված սահմանափակումները

11. Երեխային վերադարձնելու մասին վճիռների վերաբերյալ որոշակի տեղեկություններ, այն դեպքում, երբ այլ երկրում կայացված դատական վճռի կատարման պահանջ է ներկայացվում 28-րդ հոդվածի համաձայն: Նման հնարավորություն նախատեսվում է հոդված 40«2»-ով.

11.1. Վճռով նախատեսվում է երեխայի վերադարձը

11.2. Անձը, որին պետք է վերադարձվի երեխան (վճռում նշված սահմաններում)

11.2.1. Լրիվ անունը

11.2.2 Հասցեն

Կատարված է ..., օրը, ամիսը, տարեթիվը

Ստորագրությունը և (կամ) կնիքը

ՀԱՎԵԼՎԱԾ III

ՀՈԴՎԱԾ 41«1»–ՈՒՄ ՆՇՎԱԾ՝ ՏԵՍԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՎՃԻՌՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ ՏԵՂԵԿԱՆՔ⁽¹⁾

1. Ծագման անդամ պետությունը
 2. Դատարանը կամ լիազոր մարմինը, որը տալիս է տեղեկանքը
 - 2.1. Անունը
 - 2.2. Հասցեն
 - 2.3. Հեռ.(ֆաքսը) (էլ-փոստը)
 3. Տեսակցելու իրավունք ունեցող անձը (անձինք)
 - 3.1. Լրիվ անունը
 - 3.2. Հասցեն
 - 3.3. Ծննդյան օրը, ամիսը, տարեթիվը և վայրը (եթե առկա է)
 4. Ծնողական իրավունքներ ունեցող անձինք, բացի 3-րդ կետում⁽²⁾⁽³⁾–ում նշված անձանցից
 - 4.1. 4.1.1. Լրիվ անունը
 - 4.1.2. Հասցեն
 - 4.1.3. Ծննդյան օրը, ամիսը, տարեթիվը և վայրը (եթե առկա է)
 - 4.2. 4.2.1. Լրիվ անունը
 - 4.2.2. Հասցեն
 - 4.2.3. Ծննդյան օրը, ամիսը, տարեթիվը և վայրը (եթե առկա է)
- 4.3. Այլ
 - 4.3.1. Լրիվ անունը
 - 4.3.2. Հասցեն
 - 4.3.3. Ծննդյան օրը, ամիսը, տարեթիվը և վայրը (եթե առկա է)
5. Դատարանը, որը կայացրել է վճիռը
 - 5.1. Դատարանի անվանումը
 - 5.2. Դատարանի գտնվելու վայրը

¹ «Ամուսնական գործերով և ծնողական իրավունքների վերաբերյալ գործերով իրավասության և վճիռների ճանաչման ու կատարման մասին» Խորհրդի 2003 թվականի նոյեմբերի 27-ի 2201/2003 (ԵՀ) կանոնակարգը, որով ուժը կորցրած է ճանաչվել թիվ 1347/2000 (ԵՀ) կանոնակարգը:

² Համատեղ ինամքի դեպքում 3-րդ կետում արդեն նշված անձը կարող է նշվել նաև 4-րդ կետում:

³ Խաչաձև նշան դրեք այն անձի անվան դիմաց նշված վանդակում, որի նկատմամբ պետք է կատարել վճիռը:

6. Վճիռը

6.1. Օրը, ամիսը, տարեթիվը

6.2. Գործի համարը

7. Վճռում նշված երեխաները⁽¹⁾

7.1. Լրիվ անունը և ծննդյան ամսաթիվը

7.2. Լրիվ անունը և ծննդյան ամսաթիվը

7.3. Լրիվ անունը և ծննդյան ամսաթիվը

7.4. Լրիվ անունը և ծննդյան ամսաթիվը

8. Արդյո՞ք վճիռը ենթակա է կատարման՝ համաձայն տվյալ անդամ պետության իրավունքի:

8.1. Այո

8.2. Ոչ

9. Եթե վճիռը կայացվել է կողմի բացակայությամբ, չներկայացած կողմին հանձնվել է վարույթի հարուցման մասին փաստաթուղթ կամ համարժեք փաստաթուղթ բավականաչափ ժամանակ առաջ և այնպես, որ տվյալ անձը կարողանա նախապատրաստել իր պաշտպանությունը, կամ, եթե տվյալ անձին հանձնվել է փաստաթուղթ, բայց սույն պայմանների խախտմամբ, այնուամենայնիվ, հաստատվել է, որ նա անվերապահորեն ընդունել է որոշումը:

10. Առնչվող բոլոր կողմերին արտահայտվելու հնարավորություն է տրվել

11. Երեխաներին արտահայտվելու հնարավորություն է տրվել, եթե դա չի համարվել աննպատակահարմար՝ հաշվի առնելով նրանց տարիքը կամ հասունության աստիճանը

12. Տեսակցելու իրավունքն իրականացնելու համար նախատեսված գործնական միջոցները (վճռում նշված սահմաններում)

12.1. Օրը, ամիսը, տարեթիվը և ժամը

12.1.1. Սկիզբը

12.1.2. Ավարտը

12.2. Վայրը

12.3. Ծնողական իրավունքներ ունեցող անձանց հատուկ պարտավորությունները

12.4. Տեսակցելու իրավունք ունեցող անձի հատուկ պարտավորությունները

12.5. Տեսակցելու իրավունքի իրականացման հետ կապված սահմանափակումները

13. Կողմերի անունները, որոնց իրավաբանական օգնություն է ցուցաբերվել

Կատարված է ..., Ամսաթիվը

¹ Եթե երեխաների թիվը գերազանցում է չորսը, պետք է օգտագործել երկրորդ ձևաթուղթը:

Ստորագրությունը և(կամ) կնիքը

ՀԱՎԵԼՎԱԾ IV

ՀՈԴՎԱԾ 42«1»–ՈՒՄ ՆՇՎԱԾ՝ ԵՐԵՒԱՅԻՆ ՎԵՐԱԴԱՐՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՆՔ⁽¹⁾

1. Ծագման անդամ պետությունը
2. Տեղեկանքը սվոդ դատարանը կամ իրավասու մարմինը
 - 2.1. Անվանումը
 - 2.2. Հասցեն
 - 2.3. Հեռ.(ֆաքս) (էլ-փոստը)
3. Անձը, որին պետք է վերադարձվի երեխան (վճռում նշված սահմաններում)
 - 3.1. Լրիվ անունը
 - 3.2. Հասցեն
 - 3.3. Ծննդյան օրը, ամիսը, տարեթիվը և վայրը (եթե առկա է)
4. Ծնողական իրավունքներ ունեցողները⁽²⁾
 - 4.1. Մայրը
 - 4.1.1. Լրիվ անունը
 - 4.1.2. Հասցեն (եթե առկա է)
 - 4.1.3. Ծննդյան օրը, ամիսը, տարեթիվը և վայրը (եթե առկա է)
 - 4.2. Հայրը
 - 4.2.1. Լրիվ անունը
 - 4.2.2. Հասցեն (եթե առկա է)
 - 4.2.3. Ծննդյան օրը, ամիսը, տարեթիվը և վայրը (եթե առկա է)
 - 4.3. Այլ
 - 4.3.1. Լրիվ անունը
 - 4.3.2. Հասցեն (եթե առկա է)
 - 4.3.3. Ծննդյան օրը, ամիսը, տարեթիվը և վայրը (եթե առկա է)
5. Պատասխանող (եթե առկա է)
 - 5.1. Լրիվ անունը
 - 5.2. Հասցեն (եթե առկա է)

¹ «Ամուսնական գործերով և ծնողական իրավունքների վերաբերյալ գործերով իրավասության և վճիռների ճանաչման ու կատարման մասին» Խորհրդի 2003 թվականի նոյեմբերի 27-ի 2201/2003 (ԵՀ) կանոնակարգը, որով ուժը կորցրած է ճանաչվել թիվ 1347/2000 (ԵՀ) կանոնակարգը:

² Այս կետի պատասխանը լրացվում է ըստ ցանկության:

6. Դատարանը, որը կայացրել է վճիռը

6.1. Դատարանի անվանումը

6.2. Դատարանի վայրը

7. Վճիռը

7.1. Ամսաթիվը

7.2. Գործի համարը

8. Վճռում նշված երեխաները ⁽¹⁾

8.1. Լրիվ անունը և ծննդյան օրը, ամիսը, տարեթիվը

8.2. Լրիվ անունը և ծննդյան օրը, ամիսը, տարեթիվը

8.3. Լրիվ անունը և ծննդյան օրը, ամիսը, տարեթիվը

8.4. Լրիվ անունը և ծննդյան օրը, ամիսը, տարեթիվը

9. Վճիռը ենթադրում է երեխայի վերադարձը

10. Արդյո՞ք վճիռը ենթակա է կատարման անդամ պետությունում

10.1. Այո

10.2. Ոչ

11. Երեխաներին արտահայտվելու հնարավորություն է տրվել, եթե դա չի համարվել աննպատակահարմար՝ հաշվի առնելով նրանց տարիքը կամ հասունության աստիճանը

12. Կողմերին արտահայտվելու հնարավորություն է տրվել

13. Վճիռը ենթադրում է երեխաների վերադարձ, և դատարանը, վճիռը կայացնելիս, հաշվի է առել «Երեխաների միջազգային առևանգման քաղաքացիական ասպեկտների մասին» 1980 թվականի հոկտեմբերի 25-ի Հաագայի Կոնվենցիայի 13-րդ հոդվածի համաձայն կայացրած որոշման հիմքում ընկած պատճառներն ու փաստարկները:

14. Որտեղ կիրառելի է, դատարանների կամ լիազոր մարմինների կողմից ձեռնարկված միջոցառումների մանրամասները՝ բնակության վայրի անդամ պետություն վերադարձից հետո երեխայի պաշտպանությունն ապահովելու համար:

15. Կողմերի անունները, որոնց իրավաբանական օգնություն է ցուցաբերվել

Կատարված է ..., ամսաթիվը

Ստորագրությունը և(կամ) կնիքը

¹ Եթե երեխաների թիվը գերազանցում է չորսը, պետք է օգտագործել երկրորդ ձևաթուղթը:

ՀԱՎԵԼՎԱԾ V

1347/2000 (ԵՀ) ԿԱՆՈՆԱԿԱՐԳԻ ՀԵՏ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ԱՂՅՈՒՍԱԿ

ՀԱՎԵԼՎԱԾ VI

Շվեդիայի և Ֆինլանդիայի հայտարարությունները՝ «Ամուսնական գործերով և ծնողական իրավունքների վերաբերյալ գործերով իրավասության և վճիռների ճանաչման ու կատարման մասին» Խորհրդի 2003 թվականի նոյեմբերի 27-ի 2201/2003 (ԵՀ) կանոնակարգի վերաբերյալ, որով ուժը կորցրած է ճանաչվել թիվ 1347/2000 (ԵՀ) կանոնակարգը՝ համաձայն հոդված 59«2»«ա»-ի :

Շվեդիայի հայտարարությունը

«Ամուսնական գործերով և ծնողական իրավունքների վերաբերյալ գործերով իրավասության և վճիռների ճանաչման ու կատարման մասին» Խորհրդի 2003 թվականի նոյեմբերի 27-ի 2201/2003 (ԵՀ) կանոնակարգի, որով ուժը կորցրած է ճանաչվել թիվ 1347/2000 (ԵՀ) կանոնակարգը, հոդված 59«2»«ա»-ի համաձայն, Շվեդիան սույնով հայտարարում է, որ Ամուսնության, որդեգրման և խնամակալության վերաբերյալ միջազգային մասնավոր իրավունքի նորմեր պարունակող և 1931 թվականի փետրվարի 6-ին Դանիայի, Ֆինլանդիայի, Իսլանդիայի, Նորվեգիայի և Շվեդիայի միջև կնքված կոնվենցիան, ինչպես նաև դրան կից եզրափակիչ արձանագրությունն ամբողջությամբ կիրառվում են Շվեդիայի և Ֆինլանդիայի միջև հարաբերություններում՝ սույն Կանոնակարգի նորմերի փոխարեն:

Ֆինլանդիայի հայտարարությունը

«Ամուսնական գործերով և ծնողական իրավունքների վերաբերյալ գործերով իրավասության և վճիռների ճանաչման ու կատարման մասին» Խորհրդի 2003 թվականի նոյեմբերի 27-ի 2201/2003 (ԵՀ) կանոնակարգի, որով ուժը կորցրած է ճանաչվել Խորհրդի թիվ 1347/2000 (ԵՀ) կանոնակարգը, հոդված 59«2»«ա»-ի համաձայն, Ֆինլանդիան սույնով հայտարարում է, որ Ամուսնության, որդեգրման և խնամակալության վերաբերյալ միջազգային մասնավոր իրավունքի նորմեր պարունակող ու 1931 թվականի փետրվարի 6-ին Դանիայի, Ֆինլանդիայի, Իսլանդիայի, Նորվեգիայի և Շվեդիայի միջև կնքված կոնվենցիան, ինչպես նաև դրան կից եզրափակիչ արձանագրությունն ամբողջությամբ կիրառելի են Ֆինլանդիայի ու Շվեդիայի միջև հարաբերություններում՝ սույն Կանոնակարգի նորմերի փոխարեն: